№ 244 ՇԱԲԱԹ, 5 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 5 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 244

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Նոյեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 2 րուբլի։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Նոյեմբերի 6-ին, ցերեկվայ ժամը 12-ին ՆՇԱՆԱԿՎԱԾ Է

ԹԵՄ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Սրանով հրաւիրվում են բոլոր ընտրված ներկայացուցիչները Թիֆլիսի առաջնորդարան մասնակցելու պատգամաւորի ընտրութեան։

(2.) առ. 1048. 2—2

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, նոյեմբերի 7-ին
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ
Դրամա 5 արար., իշխան Սումբատովի, թարգմ. Զ. Տէր-Գրիգորեանի
Մասնակցում են՝ տ. տ. Գուլազեան, Զաբէլ, Մայսուրեան, Ցամիկ, Սիրանոյշ, պ. պ. Աբելեան, Ալիխանեան, Ալիխանեան II, Աղայեան, Աւետեան, Լաքա, Ղազարեան, Մանուէլեան, Միրզոյեան, Յարութիւնեան, Շահխաթունի, Սեւումեան և Փիրումեան։
Սկիզբն է երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։
Տեղերի գները սովորական են։
Ռեժիսոր՝ Ց. ԱԲԵԼԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Ք. Սարգսեան, Գ. Երիցեան
(ա.) 1053. 2—1

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։
Սրսկումներ նաև տուբերկուլիններով։
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10.
(ա.օ.) առ. 989. 100—21

Форманъ противъ насморка
Форманъ коробка 25 коп.

Ծախվում են անարժէք կեղծիքներ։ Իսկական Ֆորմանի իւրաքանչիւր արկղիկը պէտք է ունենայ հետևեալ ֆիրման. Դրէզդէնի Քիմիական Լաբորատորիա Լինգների, Դրէզդէնում։
(5, 17) (М.358696/358699) 1007. 3—2

ԸՆՏՐԱԿԱՆ ԵԼԵՒԷՋՆԵՐ

I

Ընտրական այն պայքարի մէջ, որ յուզում էր հայերիս ներկայ տարվայ ընթացքում, շօշափվում էին զանազան արտայայտութիւններով «մերի և ձերի», «սևի և սպիտակի» կամ «ընդհանուր ընտրեալի» խնդիրներ։

Անշուշտ՝ իւրաքանչիւր բանակ աշխատում էր անցկացնել իր թեկնածուին, և երբ այդ թւում էր անհնարին, այն ժամանակ նա կամ գոհ էր մնում նրանով, որ աւելացնում էր հակառակորդի սև քուէները, կամ ձեռնպահ էր մնում քաշվելով ասպարէզից և կամ ոյժ էր տալիս հակառակ բանակի այն թեկնածուին, որը նրա համար համեմատաբար աւելի համակրելի էր, աւելի նուազ վտանգաւոր։

Եւ այդպէս ընտրվեցին ամեն տեղ պատուիրակներ և մի քանի տեղերում նոյնիսկ պատգամաւորներ։

Նոյն հարցը վերաբերում էր և կաթողիկոսական թեկնածուի խնդրին։ Ընտրողները նախ և առաջ որոնում էին իրանց թեկնածուներին։ Եւ այդտեղ հանդէս էին գալիս մի շարք մտածմունքներ, որոնց վերջնական նպատակն էր որոշել առաջինը՝ թէ որքան համապատասխան է իր պատասխանատու և բարձր կոչմանը այս ու այն անձը, և երկրորդ՝ թէ որքան հաւանականութիւն ունի ցանկալի անձը ընտրվելու դեկտեմբերի 11-ի ընդհանուր ընտրութեան օրը։

II

Ընտրական պայքարի ժամանակ մի քանի անգամ, իբրև օրինակ, առաջ բերվեցին զանազան հիմնարկութիւնների և այդ թւում Պետական Դումայի մէջ տեղի ունեցող ընտրութիւնները։

Մենք էլ կանգ առնենք մի օրինակի վրա։

Առաջին Պետական Դումայում կադէտները նախագահի պաշտօնի համար կարողացան աջողեցնել յայտնի Մուրոմցեվի ընտրութիւնը։ Դա անշուշտ մի հոյակապ գործ էր։ Միւս կուսակցութիւնները ստիպված էին հաշտվել իրականութեան հետ։

Երկրորդ Պետական Դումայի համար փոքր-ինչ դժուարացել էր կադէտների դրութիւնը և նրանք անկարող էին իրանց փայլուն ներկայացուցիչների ընտրութիւնը աջողեցնել։ Ուրիշ պայմանախօսութիւնների մէջ մտնելով, որոշ զիջումներ անելով նրանք կարողացան անցկացնել դարձեալ իրանց կուսակից անձի՝ Գոլովինին։

Իսկ այնուհետև դժուարացաւ կադէտների գործը և յաջորդ ընտրութեան ժամանակ այլ ևս անկարելի էր մտածել զուտ կուսակցական մարդու ընտրութեան մասին։ Եւ նրանց մնում էր կամ ձեռնպահ մնալ ընտրութեան ժամանակ, ինչպէս այդ անում էին սօցիալիստական խմբերը, կամ աւելացնել ատելի անձի սև քուէները, ինչպէս այդ արին նրանք Ռօձեանկօյի վերաբերութեամբ, կամ աւելացնել միւս բանակի համեմատաբար աւելի համակրելի անձի սպիտակ քուէները, ինչպէս այդ արին նրանք Խոմեակովի ընտրութեան ժամանակ։

III

Նոյնը տեսնում ենք մեր երկրի ընտրութիւնների ժամանակ։ Նոյնը տեղի է ունեցել և կաթողիկոսական ընտրութիւնների միջոցին։

Իւրաքանչիւր բանակ աշխատել է իր թեկնածուների ընտրութիւնը աջողեցնել, բայց երբ չէ կարողացել, նա կամ բոլորովին քաշվել հեռացել է, կամ խանգարել հակառակորդի աջողութիւնը և կամ մտել է պայմանախօսութիւնների մէջ։

Խրիմեանի ընտրութեան ժամանակ մշակականները միաժամանակ դրել էին թէ Խրիմեանի և թէ Արիստակէս Սեդրակեանի թեկնածութիւնը, և մի ստուար մասի համար վերջին թեկնածութիւնը աւելի էական և կարևոր էր համարվում, քան Խրիմեանի։ Բայց և այնպէս, Էջմիածնի համագումար ժողովում՝ երկանուն ցանկ կազմելու ժամանակ՝ Սեդրակեանի անունը հանվեց, որպէսզի ընդհանուր համաձայնութեամբ միապաղաղ համազգային ամբողջացրած քուէ տրվի Խրիմեանին։

Մենք գոհ էինք, երբ վերջին կաթողիկոսական ընտրութեան ժամանակ, առանց զիջումների, առանց երկար պայմանախօսութիւնների, կարողացանք աջողեցնել մեր երկու թեկնածուների՝ Իզմիրլեանի և Դուրեանի ընտրութիւնը։

Այժմ երբ նոյն նպաստաւոր հանգամանքները չը կան, ինչպէս անցեալ անգամ, հանդէս են գալիս պայմանաւորումների խնդիրներ փոխադարձ զիջումներով։ Այսպէս ընտրութիւնները կը դառնան միայն մի ասպարէզ՝ անաջողութեան ենթարկելու այս ու այն անուն։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
3 նոյեմբերի

Պարիզ.—Եկաւ սերբիական թագաւորը, որին կայարանում դիմաւորեցին Ֆալիէրը, երկու պալատների նախագահները և կաբինէտը՝ գլուխ ունենալով Կալիօյին։ Թագաւորը և նախագահը սրտագին ողջոյններ փոխանակեցին։ Արտաքին գործերի մինիստրութիւն գնալու ժամանակ, ուր և տեղ է պատրաստված թագաւորի համար, ազգաբնակութիւնը ուրախ ողջունում էր թագաւորին։

Մամուլը միաբերան ողջունում է թագաւորին, իբրև Ֆրանսիայի սերտ բարեկամ պետութեան ներկայացուցչի և իբրև ֆրանսիացի հայրենասէրի, որ 1870 թւին կռւում էր ֆրանսիական զօրքի մէջ։

Օրլէանի քաղաքային վարչութիւնը ի յիշատակ թագաւորի՝ Օրլէանի մօտ կռւելուն, մատուցանում է ուղերձ։

Սերբիական թագաւորը Միլովանովիչի և շքախմբի ուղեկցութեամբ այցելեց Ֆալիէրին։

—

Պարիզ.—Մինիստրների խորհուրդը ընդունեց այն միջոցները, որ մշակել են զինւորական և ծովային մինիստրները վառօդի պատրաստութեան վրա հսկելու համար։

Արտաքին գործերի մինիստրը հաղորդեց, որ Անգլիան և Ռուսաստանը համաձայնութիւն են յայտնել ընդունել ֆրանս-գերմանական պայմանագիրը Մարոկկոյին վերաբերեալ։

—

Պարիզ.—Պալատը 337 ձայնով ընդդէմ 232-ի որոշեց փոխել նախագծը բիւջէի քննութիւնը արագացնելու համար։ Այսուհետև իւրաքանչիւր օրէնսդրական շրջանի միայն առաջին բիւջէն քննվելու է հրապարակով. հետևեալ բիւջէների վերաբերութեամբ սոսկ ընդհանուր վիճաբանութիւնները լինելու են հրապարակային. մնացած վիճաբանութիւնները տեղի կունենան բիւջէտային մասնաժողովի մէջ։

—

Բերլին.—Ռէյխստագի բիւջէտային մասնաժողովի մէջ Կիդերլէն-Վեխտէրը լրացուցիչ կերպով յայտնեց, թէ Ֆրանսիան պատրաստ է յօգուտ Գերմանիայի հրաժարվել 1910 թ. յունիսի 14-ի ֆրանս-սպանական պայմանագրով իրան պատկանող արտօնեալ իրաւունքներից, եթէ Գերմանիան ցանկանայ Սպանիայից ձեռք բերել սպանական Գվինէան, Զէրիսկո և Էլօբէյ կղզիները։ Գերմանիան իր կողմից յայտնել է, թէ չի մասնակցի այն առանձին համաձայնութիւններին, որոնց Ֆրանսիան և Սպանիան կարող են կապել Մարօկկօյի վերաբերմամբ։

—

Հաագա.—Պալատը մերժեց չապաղական ընդունել սահմանադրութիւնը—ընդհանուր ընտրողական իրաւունք հաստատելու մասին—փոխելու առաջարկութիւնը։

—

Բուդապեշտ.—Մամուլը բացասաբար է վերաբերվում դէպի մինիստր Գազաիի ճառը, որ խօսեց անկախ ունգարական զօրքի դէմ։

ՉԻՆԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
3 նոյեմբերի

Վաշինգտօն.—Պետական ատեանը որոշեց Մանիլիայից մի գունդ ուղարկել Ցինվանդաօ՝ Պէկինի կապը ծովի հետ պահպանելու և միջազգային ծառայութիւն կատարելու համար։

Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Չինաստան զօրքեր ուղարկելը զուրկ է քաղաքական նշանակութիւնից։ Չինաստանի հետ, բօքսէրային ապստամբութիւնից յետոյ, կապված պայմանագրով մեծ պետութիւնները իրաւունք ստացան զօրագնդեր պահել երկաթուղու գծի տարածութեամբ։ Ներկայումս կառավարութիւնը իրան հարկադրված է համարում օգտվել այդ իրաւունքից, չունենալով սակայն ոչ մի ակնկալութիւն չինական երկրից որևէ բաժին գրաւելու։

—

Պէկին.—Ջժիլիի փոխարքան հաղորդեց կառավարութեանը, որ օտարերկրեայ հիմնարկութիւնները Տեանցզինում լի են մայրաքաղաքից փախած պաշտօնեաներով, և խնդրեց միջոցներ ձեռք առնել փախստականներին յետ կոչելու։

Ջժիլիի գաւառական ժողովը հեռագրում է մինիստրների խորհրդին, թէ անհրաժեշտ է պետութիւնը ֆեդերատիվ հիմունքներով վերակազմել։

Խէնան նահանգը ինքն իրան աւտոնոմ է յայտարարել։

Իւանշիկայի զեկուցագրի համաձայն յատուկ հրովարտակով նոր կաբինէտ նշանակվեց։

—

Շանխայ.—Լուրերի համաձայն, Ուչանի ամրոցները ուժեղ ռմբակոծութիւն են սկսել Խանկոուի վրա։

Ամերիկացի միսսիոնար դոկտոր Բիգը մեկնեց Պէկին և Նանկին՝ աշխատելով համոզել գեներալ Ջժանին երկու շաբաթով զէնքերը վայր դնել։ Մինչև որ Պէկինի կառավարութիւնը վճիռ չը կայացնէ, Ջժանը հրաժարվում է, և յայտնել է, որ վերստին կը գրաւէ Սիւժօուն և Շանխայը։ Ջժանը ունի 20,000 զինւոր։ Ապստամբների ձեռքումն է երկաթուղին։

—

Խարբին.—Մուկդէնի օրինակով հասարակական հանգստութեան կոմիտէներ հիմնվեցին Լեաօյեանում, Ինկօուում, Տէլինում, Կուանչենցզիում և կազմակերպվում են ուրիշ քաղաքներում։ Յիշեալ կոմիտէները իրանց չէզոք են յայտարարում ներկայ կռւում։

ԹԻՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
3 նոյեմբերի

Կ. Պոլիս.—Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, Եգիպտոսի սահմանի Սոլումա բարձրութեան վրա նկատվել են իտալական ռազմանաւեր, որոնք ասես մտադիր են զօրքեր ցամաք իջեցնել։ Բէդուինները որոշել են արգելք լինել։

—

Կահիրէ.—Օսմանեան շրջաններում կարծում են, որ Մահմէդ-Րէուֆ փաշան Մեդինէում Եմէնի ցեղապետների հետ քննելու է թիւրք-արաբ զօրքերին Էրիտրէա ուղարկելու հարցը։

—

Կ. Պոլիս.—Արտակարգ դեսպանութիւնը Մահմուդ-Մուխտար փաշայի առաջնորդութեամբ նոյեմբերի 5-ին կը մեկնէ Լիվադիա՝ ողջունելու Կայսրին սուլթանի անունից Նորին Մեծութեան Ղրիմում գտնվելու առիթով։

Մինիստրների խորհուրդը քննում է զանազան առաջարկութիւններ խաղաղութեան մասին բանակցութիւններ սկսելու հիմունքների վերաբերեալ։ Լուրերի համաձայն, մինիստրների մեծ մասը կողմնակից է պատերազմը շարունակելուն։

—

Սալօնիկ.—Դրէվէնի միտրոպոլիտի սպանութեան գործի քննութիւնը հաստատում է այն ենթադրութիւնը, թէ ոճիրը գործվել է յոյն աւազակների ձեռքով։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)
3 նոյեմբերի

Լօնդօն.—Անգլիայի և Պարսկաստանի բարի յարաբերութիւններին աջակցելու համար վերջերս հիմնված պարսկական ընկերութեան առաջին խնճոյքին ներկայ էին ականաւոր անգլո-պարսկական գործիչներ։ Պարսից դեսպանը ասաց, որ անգլիական համակրանքները առանձնապէս գնահատելի են, երբ Պարսկաստանը աշխատում է ոտք դնել բարենորոգումների ճանապարհի վրա։ Կէրզօնը, ակնարկելով ռուսական ուլտիմատումի մասին, ասաց, որ պարսիկ գործիչները չափազանց բծախնդիր են, բայց մեծ պետութիւնների վարմունքը չէ կարելի խելացի անուանել։ Պարսկաստանը կարիք ունի ամենից առաջ հանգստութեան ու վստահութեան։

Համայնքների պալատում Գրէյը պատասխանելով հարցին՝ ասաց, որ Թաւրիզում պաշտօնավարող ռուսաց հիւպատոսը հանդէս է եկել յօգուտ Ռաշիդ-ուլ-Մուլքի, ենթադրելով՝ երբ թէ նրան սպառնում էր մահապատիժ առանց դատարանի։ Նոյն կերպ վարվեց Անգլիան, միջամտելով յօգուտ Նասր-ուլ-Մուլքի 1907 թ. դեկտեմբերին, երբ նրա կեանքը վտանգի մէջ էր։ Գրէյի կարծիքով ներկայ հարցը չէ կարելի յարուցել ռուս-անգլիական համաձայնութեան հիման վրա։

—

Թէհրան.—Պարլամենտական մասնաժողովը մէջլիսին ներկայացրած զեկուցագրով առաջարկում է արձակուրդ չը տալ պետական խնամակալին։

Ռուսական նոտային դեռ ոչ մի պատասխան չէ ստացվել։ Մինիստրների խորհրդի նախագահ Սամսամ-ուս-Սալթանէն արտաքին գործերի մինիստրի հետ միասին ընդառաջ գնալով ռուսաց կառավարութեան ցանկութեան, դեռ նոյեմբերի 1-ին հրամայեց Շուստերին յետ կանչել ժանդարմներին Շօա-ուս-Սալթանէի կալուածքից, բայց Շուստէրը մերժեց կատարելու առաջին մինիստրի անձնական կարգադրութիւնը, ասելով թէ՝ պրինցի գոյքը յարքունիս գրաւելու պատուիրաթուղթը ստորագրված է կաբինէտի բոլոր անդամներից։ Միևնոյն օրը առաջին մինիստրը և արտաքին գործերի մինիստրը հրաժարական տուին։ Նոր կաբինէտ չը կազմվեց։ Մինիստրական ճգնաժամը, նաև պետական խնամակալի հնարաւոր հրաժարականը արգասիք են բացառապէս պարսկական ներքին երկպառակութիւնների։ Կաբինէտը լրացնելու արգելք են լինում մէջլիսը և Շուստէրի գործողութիւնները։ Ռուսական ուլտիմատումի հետ այդ հրաժարականները բնաւ առնչութիւն չունեն։ Ռուսական պահանջի երկրորդ մասի առիթով—որպէսզի պարսից կառավարութիւնը ներողութիւն խնդրէ ռուս պաշտօնեաներին վիրաւորանք հասցնելու համար—առ այժմ նշաններ չը կան, թէ Պարսկաստանը բաւարարութիւն տայ այդ կէտին։

—

Պետերբուրգ.—Որովհետև պարսից կառավարութիւնը չը պատասխանեց հոկտեմբերի 29-ին Թէհրանի դեսպանի յանձնած նոտային, ռուսաց կառավարութիւնը կարգադրեց այժմ և եթ Պարսկաստան ուղարկել մի զօրաբանակ, որ սկզբներում կենտրոնանալու է Ղազվինում դէպի Թէհրան տանող ճանապարհին։

ԴԷՊՔԵՐԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

Թաւրիզ, 28 հոկտեմբերի

Թաւրիզի դրութիւնը նոյնն է. զգալի փոփոխութիւն չէ կրել։ Իր պաշտօնից հրաժարական տուեց և հեռացաւ քաղաքից նահանգապետի փոխանորդ շահզադա Իմամ-Ղուլի-միրզան և նրան յաջորդեց դեմօկրատների ընտրելին՝ Նիզամ-ուդ-Դովլէն անջումանի հրաւէրով։ Թաւրիզի դեմօկրատներն և մուջահիդներն ընդհանրապէս անբաւական էին Իմամ-Ղուլի-միրզայից՝ համարելով նրան թոյլ, անզօր և մի քիչ էլ շահականներին համակիր, մինչև իսկ մեղադրում էին նրան, որ տակից օգնում է Շուջա-ուդ-Դովլէին՝ գաղտնի մատակարարելով ռազմամթերք։ Քաղաքից դուրս գալիս իրան ուղեկից էին ռուս կօզակները։

և որովհետև կոզակները մի փարսախ առաջ էին գնացել իրան սպասելու, քաղաքից մի քիչ հեռու մուջահիդները, խուզարկելու պատրուակով, զինաթափ արին նրան և իր մարդոց, խլեցին ինչ որ ունէր, անգամ փողի քսակը, և ապա արձակեցին։

Յայտնի է արդէն, որ էյն-ուդ-Դօվլէն հրաժարվել է Ատրպատականի նահանգապետութիւնից և նրա տեղ նշանակվել է շահզադա Ֆարման-Ֆարմանը, որի բարի գալստեանը սպասվում է օրէ-օր։

Շուջա-ուդ-Դօվլէն և իր հերոսները դիրքերումն են. իրանց դիրքերումն են նաև նացիոնալիստները. տուժողն է միայն աղքատ հասարակութիւնը պաշարեղէնի քչութեան և տարապայման թանգութեան երեսից։ Շուջա-ուդ-Դօվլէն տրամադիր է հաշտութիւն կայացնել ու գնալ. սակայն նացիոնալիստները խիստ պահանջներ են առաջարկում։ Ժողովուրդը սկսել է դառն տրտունջներ արտայայտել մուջահիդների դէմ, որոնք աղմուկն աւելի շատ քաղաքի մէջն են անում, քան ուր որ հարկաւոր է։ Թէհրանը մի շաբաթ առաջ արտօնել և հրահանգել էր հաշտութիւն կայացնել Սամադ-խանի հետ և բաց անել տալ պարէնեղէնների ճանապարհը, մնացածները թողնելով կենտրոնին՝ Թէհրանին։ 4—5 օր առաջ անջումանից 3 հոգի և 5 հոգի քաղաքի վաճառականներից և սարաֆներից պատգամաւոր գնացին Շուջա-ուդ-Դօվլէի մօտ հաշտութեան բանակցութիւն կատարելու։ Ընդունելութիւնը Վասբինջում շքեղ էր. 100 ձիաւորներ դէմ եկան պատգամաւորներին և առօք-փառօք տարան Սամադ-խանի մօտ։ Ինչպէս երևաց հետևեալ օրը, բանակցութեան արդիւնքը շատ գոհացուցիչ էր, որովհետև քաղաքում ձայն տարածվեց, որ ճանապարհները բացվել են, և արդարև սկսեց ցորեն և այլ մթերքներ թափվել Թաւրիզ և աստիճանաբար գներն ընկնել։ Ժողովրդի ուրախութիւնն անչափ էր, սակայն այդ ուրախութիւնը շատ չը տևեց, և լսվեց, որ ճանապարհները նորից փակվել են։ Սամադ-խանը առաջարկել է պայմաններ. նախ իրանից ոչ մի դրամ չը պահանջել, գիտենալով որ հաւաքած մալիաթի փողերը ծախսվել են զինուորական գործողութիւնների վրա. երկրորդ՝ տալ իր կեանքի և գոյքի մասին ապահովութիւն՝ երաշխաւորութեամբ մի մեծ պետութեան։ Թաւրիզն ինչ պայմանի համակերպի՝ կողոպտված փողերը ներել չէ կամենում։ Անցած տարվանից Շուջա-ուդ-Դօվլէն ժողովել է ժողովրդից 40,000 թուման, այս տարի մօտ 60,000. համագումար 100,000 թումանի մի գումար։ Սամադ-խանն ասում է չուզել այդ փողը, իսկ Թաւրիզը խստիւ պահանջում է գումարները։ Այդ պատճառով ևս բանակցութիւնները մնացին անհետևանք և ճանապարհները նորից փակվեցին՝ մինչև ցնոր տնօրինութիւն։

Ղարադաղում խաների կռիւները շարունակվում են, թէ որպիսի կացութեան մէջ է գտնվում հայ ազգաբնակութիւնը, նկարագրել անկարելի է։ Բողոքներ և դիմումներ շատ կան առաջնորդարանին, սակայն ինչ կարող է անել ազգային իշխանութիւնը, երբ երկրի բուն տէրը անկարող է, և, կարելի է ասել, երկրում տէր ու պաշտպան չը կայ։ Մանրամասնութիւններ Ղարադաղից պակասում են. իմանում ենք այն, որ Րահիմ-խանի որդի Բօյուկ-խանը սպանելիս է եղել հայերին, և վախ կայ, որ իր վրէժը հայերից հանէ։ Տնտեսական վիճակը Ղարադաղում բոլորովին քայքայված՝ հեռու չէ այն օրը, երբ ժողովուրդը զարհուրելի սովի մատնվի, եթէ չը հասցնենք նիւթական օգնութիւն. մինչև այսօր եղածն աննշան է։ Գաղթը դէպի Կովկաս վաղուց է սկսվել։

Անտէր է և Թադէոս առաքեալի վանքը. ոչ մի օգնութիւն և ոչ էլ վանահայր ուղարկեց էջմիածինը։ Վանքը մնում է անխնամ՝ սարդարի ձեռքի տակ։ Սպասել, որ Ատրպատականի Թեմակալն և խորհուրդը կատարեն անհրաժեշտ հոգածութիւն՝ անկարելի է։

Հայկազուն

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պօլիս, 22 նոյեմբեր

Երէկ ազգ. ժողովի մէջ կեդրոնի խմբակցութիւնը յաղթանակ մը տարաւ յաջողելով 45 քուէ համախմբել իր ընտրելիին՝ Օննիկ Չէֆթէ-Սարաֆի վրայ, մինչ ձախակողմը հազիւ կրցաւ 14 քուէ համախմբել իր ընտրելիին՝ Աղէքսանդր Փանոսեանի համար։

Ունկնդիրներու շարքին մէջէն երէկ ուշադրութեամբ դիտողին համար մէկէ աւելի նկատելի կէտեր կային։

Դարձեալ կուսակցական կիրքը երկու կողմերն ալ բորբոքած էին։

Ժողովին սկզբնաւորութենէն առաջ արդէն «վրաս-գրէ» ազատականաց խումբը գրեթէ իր ամբողջութեամբը եկած էր, աւելի օգուտ քաղելու և օգտուելու համար կեդրոնի անդամներու սովորական յետամնացութենէն։ Ժողովի բացման պահուն 56 երեսփոխաններ արդէն ներկայ էին, ինչ որ խիստ անսովոր բան մըն էր։ Այդ 56-ին մէջ ապահովաբար 30-ը ձախակողմեաններէն ըլլալով կեդրոնին դիրքը վտանգուած էր, և եթէ անմիջապէս քուէարկութիւն կատարել կարելի ըլլար, հաւանական է, որ մեծամասնութիւն շահէին։

Ասոր համար արդէն ամեն բան պատրաստութիւն տեսած ըլլալու երևոյթ ունէին։ Այս շաբթու երկու յոյժ ստիպողական հրաւէրներէ զատ, խմբակցութեան գումարման համար, յատուկ հրաւէրով ստիպողական կը հոչակէին «ազատական» երեսփոխանաց ներկայութիւնը ազգային ժողովին։

«Ազատամարտի» այդ հրաւէրներուն արդիւնքը բացորոշ կը տեսնուէր, զի բոլոր ձախակողմեանք, նոյն իսկ անոնք՝ որոնք հազիւ կը բարեհաճին քանի մը ամիսը մէկ անգամ նիստերուն ներկայ գտնուիլ, եկած էին ժողովի։ Սակայն այդ հրաւէրները հաւասարապէս ազդած էին կեդրոնին կամ այլ բացատրութեամբ ոչ-ձախակողմեաններուն վրայ, որոնք՝ աղէկ հասկնալով այդ հրաւէրին նշանակութիւնը և իմաստը՝ փութացած էին իրենք ալ «ներկայ գտնուիլ այս յոյժ կարևոր նիստին», ինչպէս կը յանձնարարէր ձախակողմեաններու հրաւէրը։

Ասով վիժեցաւ ձախակողմեանց ծրագիրը, մանաւանդ ատենական գործողութեանց երկարաձգմամբ, որ ատեն հետզհետէ հասնող ուշ մնացած երեսփոխաններու գալովը՝ 83-ի հասաւ ներկաներուն թիւը, և աջակողմը իր տիրապետող մեծամասնութեամբը ջախջախեց ձախակողմին ռազմագիտութեամբ երևակայած յաղթանակը։

Եթէ 71-ի լրացած պահուն քուէարկութիւն կատարուէր, յաղթանակը անոնցը պիտի ըլլար, վասնզի անոնք՝ ունէին 34 քուէ, որուն վրայ աւելնալով 4 սպիտակները՝ պիտի կազմէին 38 քուէ, որուն դէմ կեդրոնն ոյժ պիտի ներկայանար միայն 33 քուէով, և մէկ քուէի առաւելութեամբ Փանոսեան պիտի ընտրուէր պատգամաւոր։

Ասով անգամ մըն ալ կապացուցուի, թէ ազգ. ժողովի իրական մեծամասնութիւնը կը ներկայացնէ կեդրոնը, և եթէ ասիկա պարտութիւններու կը մատնուի, ոչ թէ ուրիշ բանի համար է, այլ անոր համար, որ իր անդամները, չունենալով շատ անգամ գիտակցութեան և արժանապատուութեան զգացում, կը թերանան իրենց պաշտօնին մէջ և չեն յաճախեր ժողովներու, կամ ստորագրելով կը մեկնին, վճռական պահուն՝ քուէարկութեան ատեն միայն դատարկ աթոռներ ձգելով սրահին մէջ։

Կեդրոնի այս նիւթական յաղթանակը՝ նաև յաղթանակն էր սահմ.-ռամկավար կուսակցութեան, վասնզի ընտրուածը սահմանադիր-ռամկավար մըն էր։ Եւ այս էր, որ կը գրգռէր բոլոր ջիղերը դաշնակցականներուն և իրենց խոնարհ երկրպագուներուն, որոնք իրենց բոլոր ոյժը գործածեցին այդ նուաստութեան չենթարկուելու համար, և յաղթանակը շահեցաւ Թէքէեան, որ գրեթէ միայնակ ու առանձին յաջողեցաւ կեդրոնին անդամներուն քուէն համախմբել իր ընկերոջը անձին վրայ։ Համազգային ժողովին ուրեմն պիտի մասնակցին սահմ.-ռամկավար երկու ոյժերը, մին՝ իբր Կ. Պօլսոյ, և միւսը՝ իբր Եգիպտոսի պատգամաւոր։ Այս երկու կարևոր պատգամաւորները անշուշտ իրենց բարերար ազդեցութիւնը պիտի ունենան միւս Թիւրքահայ պատգամաւորներուն վրայ։

* * *

Երէկի ազգ. ժողովի մէջ կեդրոնը նիւթական այս յաղթանակէն յետոյ մատնուեցաւ բարոյական պարտութեան մը։ Կեդրոնին Ղևոնդեան-Գէորգեան խմբակը յաջողեցաւ ճնշիչ մեծամասնութեան միմիայն 35 քուէարկուներու մասնակցութեամբը նուիրագործելով, 14-ի դէմ 21 քուէով, Գէորգ եպ. Երէցեանի պէս խաֆիյէ ու դաւաճան եկեղեցականի երեսփոխանութիւնը։ Ձախակողմեանք ձեռնպահ մնացին այս քուէարկութեան, մասնաւորապէս Վռամեանի ջանադրութիւններով կամ Դաշնակցութեան ջանքերովը։ Ձեռնպահութեան որոշումը հոն ժողովին մէջ տրուած էր, հակառակ անոր, որ նոյն առտու ձախակողմին խորհրդակցութեանց մէջ որոշուած էր բեկանման կողմը քուէարկել։

Դաշնակցական Վռամեան առտուան որոշումը շրջափոխել յաջողեցաւ հոս, ասով ապահովելով Երէցեանի երեսփոխանութիւնը, յուսալով թէ ասոր հետևանքը կրնայ ըլլալ նաև անոր պատրիարքութիւնը։ Այդ պարագային կերևայ թէ կամ Վռամեան և կամ իր կուսակցութիւնը որոշ ակնարկութիւն մը ունին...

Գէորգ եպ. հին րէժիմին մէջ այնքան վարժ զօրաւոր կողմին, կառավարութեան ոյժին կռթնելու՝ հիմա ալ գտած է սոփայկիր հրոսակներու ոյժին կռթնելու հնարքը։

Աստուած բարի վայելում տայ։ Իրար արժող մարդիկ են, որ իրար կը գտնեն։

Շառայլ

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲԻՐԿՆԵՐ

Մերսին, 16/29 նոյեմբեր

Իտալացոց կռիւները, հակառակ տարաձայնութեանց, դեռ ներքին խռովութեանց պատճառ մը չտուին այս կողմերը բարեբաղդաբար։ Իրաւ է, որ ընդհանուր ջղայնոտութիւն մը կայ ու կը մնայ, բայց յուսալի է, որ կառավարութիւնը կարողանայ իր իսկ գերագոյն շահերուն տեսակէտովը՝ զանոնք զսպուած պահել։

Ուրիշ առթիւ ալ գրած ենք, ցորչափ որ կառավարութիւնը անկեղծօրէն չուզէ, և իր պաշտօնեայքը իրենց քէյֆին չձրգուին, այս երկրին մէջ ցաւալի միջադէպներ չեն կրնար ծագիլ։

Իսկ ներկայ հանգամանքները աւելի փափուկ են։ Քրիստոնէից դէմ արծարծուող խռովութիւն մը միմիայն՝ ամեն գործածութեան յարմարող՝ հայերուն վրայ չը կրնալով սահմանափակուիլ՝ դիւրաւ պիտի անցնի և եւրոպացիներուն։ Զէ որ իտալացիք եւրոպացի են, ուստի յուսալի է, որ կառավարութիւնը այդքան պիտի չխենթենայ՝ այսպէս ընթացքով մը՝ կայսրութեան գոյութիւնն իսկ վտանգի ենթարկելու։

Այնուամենայնիւ առայժմ գէթ երևոյթական խաղաղութիւն մը կը տիրէ, թէև պատերազմին ձախող կամ սուր մէկ ուրիշ ընթացքը մեր երկրին մէջն ալ խնդիրները կրնայ գահավիժել, որոց չափն ու հետևանքը այժմէն չափել հնարաւոր չէ։

Աւելորդ է ըսել, թէ հայութիւնն այս կողմերը՝ դեռ աչքը հազիւ բացած երէկուան աննկարագրելի աղէտէն՝ ուրիշ բան չի ցանկար, բայց եթէ այս խնդրոյն ևս ոևէ եղանակաւ խաղաղ կարգադրութեան մը։ Խնդրոյն ձախող ընթացքը, կը վախցուի, քաւութեան նոխազ ընտրէ յաւէտ նահատակ ազգութիւնն իսկ։

Ուրեմն խաղաղութիւն մը, որ սակայն կրնայ վաղուան մեծ փոթորիկին նախընթացը ըլլալ։ Անակնկալներու եղանակ մը....։

Եթէ ջարդ ու կոտորած չեղաւ, ըսինք, աս ըսել չէ, թէ պատերազմին հետևանքը զգալի չեղաւ։ Առանց այն ալ խախուտ մեր տնտեսական կացութիւնը և առևտրական գործունէութիւնը մեծապէս ազդուած կը մնան անկէ։

Ապագայի անստուգութիւնը և հետևանք անվստահութիւնը առևտրական ոգևորութիւնները ջլատած են։ Գործերը դադրած, բանքաները իրենց վարկը վերցուցած, անանկութեանց երկիւղը ամենուն գլուխի վրայ կեցած։ Ահա կացութիւնը։

Մ-ինա

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ-ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՖՈՆԴ

Ա

Վերը յիշված օրինակները (Տես «Մշակ» № 241) բաւականաչափ հաստատում են այն իրողութիւնը, որ մեր դպրոցների համար թոշակարկղ հիմնելու միտքը հասունացած է և իրագործելու շրջանի մէջ է մտնում արդէն։ Հանգուցեալ կաթողիկոսն էլ մեծ համակրանքով էր խօսում այս խնդրի մասին, և եթէ նրա վաղաժամ մահը վրա չը հասնէր՝ ներկայումս հաւանօրէն ընդհանուր ուսուցչական թոշակարկղը եթէ ոչ արդէն հիմնված, գոնէ մշակվելիս կը լինէր՝ մօտ ապագայում իրագործվելու համար։

Կարիք չը կայ երկար բացատրելու, թէ ինչ հանգամանքներ նպաստեցին ուսուցչական ընդհանուր թոշակարկղի գաղափարը արծարծելու և դէպի նա համակրանք գրավելու։ Պետական պաշտօնեաների, որոնց թվում և պետական դպրոցների ուսուցիչների համար վաղուց հետէ գոյութիւն ունին թոշակներ. Եւրոպայում և նոյն իսկ Ռուսաստանում շատ մասնաւոր զուտ առևտրական հաստատութիւններ իրանց ծառայողների համար թոշակներ են սահմանել. Ռուսաստանում վերջին 8—9 տարվայ ընթացքում տեղի ունեցած սօցիալական մեծ շարժման մէջ՝ աշխատաւոր դասակարգի ապահովութեան հարցը հիմնական պրօբլեմներից մէկն էր կազմում։ Այս խոշոր երևոյթները, որոնք բոլորի աչքի առաջ տեղի էին ունենում, բնականաբար և մեր մէջ ստեղծեցին տրամադրութիւն՝ մեր հասարակական ասպարէզի վրա ամենից մեծ աշխատաւոր և ամենից աւելի զրկված դասակարգի՝ ուսուցչութեան ապահովութեանը հոգ տանել։ Այս հարցով հետաքրքրվեցին ոչ միայն ուսուցիչները, որ շատ բնական էր, այլ և հոգաբարձութիւնները և դպրոցների հետ անմիջական կապ չունեցող ինտելիգենտ անձեր և մամուլը։

Եվ սա շատ հասկանալի է։ Ուսուցչի ապահովութիւնը—լինի նրա պաշտօնը հաստատուն դարձնելով, լինի առատ ռոճկով վարձատրելով, լինի հանգստեան թոշակ սահմանելով—բարեգործութիւն չէ, որ հասարակութիւնը կամ դպրոցի հոգաբարձութիւնը անում է ուսուցչի նկատմամբ, այլ խելացի տնտեսական հաշիվ է։ Ներկայումս ընդհանուր երևոյթ կարելի է համարել, որ մեր միջնակարգ դպրոցներն աւարտողները գնում են ուսուցչութիւն անելու միայն այն դէպքում, երբ ուրիշ պատրաստ պաշտօն չեն գտնում. ուսուցչական պաշտօնը, չը նայելով նրա վեհ նպատակին և ազնիվ յատկութեան, չէ գրավում մեր երիտասարդներին, այն գլխաւոր պատճառով, որ անհաստատ է, կեանքի միջակ ապրուստ չէ ապահովում և ապագայ չունի։ Եթէ հնարաւոր լինէր այս երեք խոշոր խոչընդոտները վերացնել, մենք կունենայինք յատկապէս ուսուցչական ասպարէզի համար պատրաստված, այդ գործին հոգով նվիրված և փորձառու ուսուցիչներ։ Իսկ որ այսպիսի ուսուցիչներ ունենալ ցանկալի է՝ ամեն կասկածից դուրս է։ Ուրեմն մեր դպրոցական գործով հետաքրքրվող բոլոր անձերը, սկսած հոգևոր ծայրագոյն իշխանութիւնից մինչև սոսկ քաղաքացին, պարտաւոր են ամեն կարելի միջոց գործ դնել՝ այդ երեք չարիքը ոչնչացնելու, վերացնելու, որով կարելի կը լինի ընտիր, հաստատուն ուսուցիչների խումբ ունենալ և մեր դպրոցներում առաջադիմութիւնը և բարեկարգութիւնը բարձր աստիճանի հասցնել։

Կ. Հ. Բար. Ընկերութիւնը դպրոցական-ուսուցչական ֆօնդ կազմակերպելով՝ նախաձեռնում է վերացնելու մեր նշանակած երեք չարիքներից մէկը, նպատակ դնելով, ի միջի այլոց, ապահովել երկար ժամանակ դպրոցներում պաշտօնավարող անձերի ծերութեան հասակը, կամ, ուրիշ խօսքով ասած՝ կենսաթոշակ սահմանելով։

Յայտնի ճշմարտութիւն է, թէ օրէնքը չէ որ կեանքի նոր պայմաններ է ստեղծում, այլ կեանքի միշտ փոփոխվող պայմաններն են, որ ստիպում են նոր օրէնքներ սահմանել, ընդ առաջ գնալ կեանքի նոր պայմաններին։ Մեր դպրոցները դեռ չունեն ընդհանուր թոշակարկղ. սրա համար հարկաւոր է կենտրոնական հոգևոր իշխանութեան նախաձեռնութիւնը, հարկաւոր է կանոնադրութիւն մշակել, հաստատել (կամ հաստատութեան առաջարկել), աղբիւրներ ստեղծել և իրագործել։ Բայց մինչև որ ընդհանուր թոշակարկղի հիմնարկութիւնը օրէնք դառնայ՝ կեանքը այս անգամ էլ կանխում է զգացված կարիքը, պահանջներ է դնում. դրանք մասնաւոր դէպքերում իրագործվում են (Ներսիսեան և Գայիանեան դպրոցներ). ընդհանուր ուսուցչական թոշակարկղ հիմնելու միտքը հետզհետէ տարածվում և համակրութիւն է գտնում. մի մեծ հիմնարկութիւն (Բարեգործական Ընկերութիւնը) այդ նպատակի համար ֆօնդ է ստեղծում. այս բոլորը պէտք է ազդեն մեր դպրոցների բարձրագոյն վարչութեան՝ կենտրոնական հոգևոր իշխանութեան վրա, պէտք է հասկացնեն, որ ընդհանուր ուսուցչական թոշակարկղ հիմնելու գործը չէ կարելի այլևս յետաձգել. դա ժամանակի կարիք է, կեանքի պահանջ է, որին ընդառաջ պէտք է գնայ օրէնքը՝ թոշակարկղի պաշտօնական հիմնարկութիւնը։

Ընդհանուր ուսուցչական թոշակարկղը՝ խորին կերպով հաւատացած եմ՝ մեր դպրոցների աջողութեան, նոյնիսկ կայունութեան հիմնական պայմաններից մէկն է. նա դէպի դպրոցական ասպարէզ կը գրավէ լավ պատրաստված ոյժեր և եղածներին պինդ կը կապէ դպրոցների հետ։ Թոշակարկղ հիմնվելուց յետոյ ուսուցչի աչքը այլևս դուրսը չի լինի, նա չի թողնի ուսուցչական պաշտօնը՝ հէնց որ մի ուրիշ յարմար պաշտօն գտնէ. այլ կը շարունակէ ծառայել դպրոցում 15—20—25 տարի, համոզված լինելով որ այս ծառայութեան փոխարէն ինքը և իր ընտանիքը ծերութեան հասակում ապահովված կը լինեն մի համեստ ապրուստով։

Այս պատճառով պէտք է յուսալ, որ հայ հասարակութիւնը արձագանք կը տայ Կ. Հ. Բ. Ընկերութեան կոչին և իր նվէրներով հնարաւորութիւն կը տայ կազմել այնքան «համակրելի և այնքան ժամանակակից ուսուցչական դպրոցական ֆօնդը»։ Այս նվէրները ոչ միայն կը թեթևացնեն բազմաշխատ հայ ուսուցչի ապագան, այլ և կը ծառայեն իբրև անկասկածելի փաստ, թէ հայ ժողովուրդը հետաքրքրված է իր դպրոցներով, սիրում է նրանց, գիտակցում է նրանց կարիքները և պատրաստ է զոհաբերութիւններ անելու՝ այդ կարիքները լրացնելու համար։

Ստ. Մալխասեանց

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՅԱ-ՍՕՖԻԱՆ ԵՒ ՆՐԱ ՊԱՐԳԵՒԸ *)

(Մի քանի ամիս Եւրոպայում)

Մեր նաւը պէտք է մեկնէր Պօլսից նոյն օրը, ժամը 4-ին կէսօրից յետոյ, ուստի ես լաւ համարեցի՝ Թիւրքական մայրաքաղաքի փողոցներում մի քանի ժամ շրջելուց և նրա մասին մի ընդհանուր գաղափար կազմելուց յետոյ՝ տեսնել խորին հնութեան մի կենդանի մնացորդ՝ Այա-Սօֆիայի մզկիթը, որի մասին այնքան գովասանք էի կարդացել ռուս ճանապարհորդների գրուածքներում։

Ժամը 2-ն էր արդէն, երբ ես և կինս, ռուսահայերիս ծանօթ Տիգրան Զաւէնի սիրալիր ընկերակցութեամբ, Ղալաթիայի ծովափից մակոյկ նստեցինք անցնելու Ստամբուլ, բիւզանդական հին քաղաքամասը, ուր գտնվում է Այա-Սօֆիան։ Հարիւրաւոր նաւակներ են վխտում ցերեկվայ այդ ժամին Ոսկեղջիւրի վրա, ինչպէս նաև մեծ ու փոքր շոգենաւեր, որոնք ամեն րոպէ սպառնում էին ընդ միշտ ջրերի յատակը սուզել մեր մակոյկը. սակայն մեր նաւավարը, անորոշ ազգութեան մի յաղթանդամ վառվռուն երիտասարդ, ամենայն ճարպիկութեամբ կարողանում էր ուղղել մակոյկն այնպէս, որ բոլոր շոգենաւերը, ինչքան էլ սրընթաց ու անզգուշաբար յարձակվել կամենային մեզ վրա, վրիպում էին նպատակից, և մենք վերջ ի վերջոյ անվըտանգ երերվում էինք միայն նրանց ընթացքից առաջացած խոշոր ալիքների գոգում։

Հասնելով Ստամբուլ՝ մենք կառք նստեցինք և բաւականաչափ լայն փողոցներով, որոնք այնքան հազուագիւտ են Պօլսում, սկսեցինք բարձրանալ դէպի վեր։ Մենք անցանք Բ. Դրան առաջից, որ թէև մեծ ու լայնատարած, բայց աննշան ու անհետաքրքրական մի շէնք է՝ կազմված բազմաթիւ կտորներից, որոնք իրար կցված են այնպէս, ինչպէս գոյնզգոյն կարկատանները մի հնամաշ հանդերձի վրա։

— Ահա և Այա-Սօֆիան,—ցոյց տուեց մեզ Զաւէնը քիչ յետոյ, երբ մենք արդէն կանգնել էինք տաճարի դրան առաջ։

Խառն ի խուռն տներով շրջապատված՝ նա հեռուից չէ երևում, չը նայելով որ շինված է բաւականաչափ բարձր տեղում։ Մենք վայր իջանք կառքից և մտանք հինաւուրց տաճարի գաւիթը։ Նեղ ու անձուկ է այդ գաւիթը, անվայել մի հսկայական շէնքի, որի արտաքին տեսքն անհնար է լինում ընդգրկել՝ գաւիթի հէնց այդ յատկութեան պատճառով։ Սակայն, որքան կարելի էր տեսնել, հին աշխարհի եօթը հրաշալիքներից մէկը՝ Այա-Սօֆիան իր արտաքին երևոյթի մէջ չունի ոչ մի գրաւիչ բան։ Բարձր ու ցածր սպիտակ պատեր, վերևում թեքուածքներ ու կամարներ՝ լայնախառ ու նկուն գմբէթի հետ միասին՝ ներդաշնակութեան տարրական կնիքն անգամ չեն կրում իրանց վրա և ամենևին գաղափար չեն տալիս այն չքնաղ գեղեցկութեան մասին, որ ծածկված է նրանց մէջ։ Իսլամական մզկիթի փոխարկված այդ քրիստոնէական տաճարը նման է մի մարդու, որի խղճուկ ցնցոտիների և անհամբոյր արտաքինի մէջ ապրում է մի հազուագիւտ գանձ—մի չքնաղ հոգի։

Մենք շտապում էինք ներս մտնել, սակայն դա այնքան էլ հեշտ չէր, որքան կարելի էր գուշակել սահմանադրական Պօլսի մէջ տիրող այժմեան կարգ ու կանոնից։ Հարկ եղաւ կանգ առնել տաճարի մուտքի առաջ և կօշիկների վրայից հագնել կաշուէ ոտնամաններ, որոնք դրան երկու կողմում շարված են փայտեայ դարակների մէջ և յատկապէս պատրաստված մեզ նման գեավուր այցելուների համար։ Արդեօք թիւրք կրօնաւորները, որոնք ստիպեցին կնոջս՝ հանած կրկնակօշիկների փոխարէն՝ անպատճառ հագնել իրանց առաջարկած ոտնամանները, տաճարի մաքրութեան մասին էին հոգում, թէ մտածում էին պաշտպանել մզկիթի յատակը մեր պիղծ ոտների հպումից—դա իրանց գաղտնիքն է. յամենայն դէպս դա մի շահաւէտ հոգս է, որ չէ մնում առանց վարձատրութեան օտար այցելուների կողմից ու, թերևս, կազմում է նրանց ապրուստի միակ միջոցը։

Սովորական իմաստով եկեղեցի կամ մզկիթ չէր, որ մենք տեսանք, երբ վերջապէս կարողացանք Այա-Սօֆիայի դռնից ներս մտնել, այլ յիրաւի մի ճարտարապետական եզակի հրաշալիք։

Չը նայելով որ ես շատ բան կարդացել ու լսել էի նրա մասին, չը նայելով որ ուրեմն ես նախապատրաստված էի տեսնելու մի հազուագիւտ գեղեցկութիւն, բայց և այնպէս իմ առաջին տպաւորութիւնն այնքան ապշեցուցիչ և անակնկալ էր, որքան ապշեցուցիչ և անակնկալ կարող է լինել մի մենաւոր ուղևորի տպաւորութիւն, որի առաջ, երկար ու ձանձրալի ճանապարհի միամանութիւնից յետոյ, յանկարծ բացվում է մի շքեղ տեսարան, որի բարեզարդութեան համար գերագոյն արուեստագէտ բնութիւնը չէ խնայել ոչ մի ջանք ու աշխատանք։ Սակայն մարդկային հանճարը գիտէ երբեմն գերազանցել և գերագոյն արուեստագէտին ու ստեղծել մի այնպիսի չնաշխարհիկ կերտուածք, որի վրա կը զարմանար հէնց այդ նոյն մեծ արուեստագէտը։ Այդպիսի կերտուածքներից է Այա-Սօֆիան։

Երկկարգ, բարձրուղէշ, գեղահատակ-պորփիւրեայ սիւներ աջ ու ձախ կողմում. խոյակներ նուրբ ու չքնաղ զրուագներով նրանց կատարներին. հսկայաթև վերամբարձ կամարներ, նման երկնային կամարին՝ համարձակօրէն կարկառած երկու հանդիպակաց պատերի վրա. պատուհաններ բարձր, վայելուչ՝ առատ լուսաւորութեամբ, որոնք ողողում են արևի ճառագայթներով տաճարի ներսը. մարմարեայ վիթխարի պատեր՝ փոքր ինչ գունատ ու սևացած դարերի ազդեցութիւնից և իսլամական անհոգութիւնից, և այս ամենի գլխին, իբրև մի հոյակապ զարդարանք, այնպիսի հրաշագեղ կիսագունդ-գմբէթ, որ մարդ նայում է, նայում և չէ կամենում հայեացքը հեռացնել նրանից։ Ահա Այա-Սօֆիան։ Ոչ, դա մզկիթ չէ՝ արևելեան խայտաճամուկ սեթևեթներով՝ շլացնելու ուղղհաւատ միւսլիմանների սիրտն ու հոգին, և ոչ քրիստոնէական եկեղեցի՝ իր մութ ու մռայլ խորհրդաւորութեամբ գերեզմանական երկիւղ ազդելու աղօթող բազմութեան վրա, այլ ուրախ, զուարթ, իր կերտուածքի նուրբ ներդաշնակութեամբ անչափ հաճելի ու դուրեկան մի տաճար, մի նախնի հեթանոսական տաճար, ուր պէտք է տիրող հանդիսանար ինքը լուսափիւռ Ապոլլոնը։ Եւ մի թէ զարմանալի է, որ Այա-Սօֆիան եկեղեցի չէ և ոչ մզկիթ։ Նրա ամեն մի քարը, ամեն մի սիւնը, ամեն մի զարդարանքը կապտած ու կողոպտած են Ելլադայի, Փոքր-Ասիայի և նոյնիսկ Կիկլադեան կղզի-

---

*) Տես «Մշակ» № 243.

ՉԱՑՆԱԿՑՈՒՄ ԵՆՔ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԵԱՆ

«Մշակի» № 241-ի մէջ տպված Զաքարիա Նազարբէկեանի առաջարկութիւնը—կազմել Թիֆլիսում զանազան ներկայացուցիչների մասնակցութեամբ մի խորհրդակցական ատեան՝ քննելու համար կաթողիկոսական հարցի շուրջը շօշափված և արծարծված մի քանի հարցեր, ինչպէս և կաթողիկոսական ընտրելիների վերաբերմամբ եղած մի քանի ամբաստանութիւններ—թէև արժանի է ամենայն ուշադրութեան, բայց դժուար իրագործելի։

Մենք համաձայն ենք յօդուածագրի այն հիմնական մտքի հետ, թէ վերջերս հայ մամուլի մէջ այնքան թեր և դէմ յօդուածներ տպվեցին զանազան եկեղեցականների (գլխաւորապէս Օրմանեան, Սուրէնեան, Դուրեան արքեպիսկոպոսների, Կարապետ և Մեսրոպ եպիսկոպոսների) մասին, որ դժուար է ընթերցող հասարակութեան համար որոշ եզրակացութեան յանգել, ուստի և միակ միջոցն է մի իրաւարարական ատեան կազմել, որ, քննելով բոլոր գրվածները, լրացնելով թերատ տեղեկութիւնները, արձակէ իր վերջնական եզրակացութիւնը։

Առաջարկը շատ համակրելի է, բայց, կրկնում ենք, գործնականի մէջ շատ դժուար իրագործելի։ Դժուար թէ մեր մամուլի օրգանները—«Մշակ», «Հորիզոն», «Սուրհանդակ», «Հովիտ», «Բիւզանդիոն», «Ժամանակ», «Արևելք», «Ազատամարտ» և այլն, որոնց մէջ գլխաւորապէս տպվել են յօդուածները, ամբաստանութիւնները—համաձայնութեան գան այդպիսի մի ատեան կազմակերպելու համար։ Իսկ եթէ ատեանը կը կազմվի մամուլի օրգանների մի մասի, կամ հասարակութեան խաւերի մի քանի շրջանների ձեռքով, այդ դէպքում նա կը հրատարակվի հակառակորդների կողմից միակողմանի, աչառու և այլն։

Որպէսզի որևէ որոշումն կամ եզրակացութիւն պարտադիր և ընդունելի լինի ամենքի կողմից, պէտք է այդ որոշումն արձակող մարմինը ձեռնհաս լինի և ամենքից ընդունված։

Մենք կարծում ենք, որ այդպիսի ձեռնհաս ատեան կը լինի այն համազգային ժողովը, որ պէտք է գումարվի դեկտ. 11-ին Էջմիածնում ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան համար։

Այդ ժողովը, որի մէջ լինելու են զանազան հոսանքների ներկայացուցիչներ, կարող է ընտրել իր միջից մի մասնաժողով, որ կը կատարէ քննութիւնը և արդիւնքը կը ներկայացնէ ժողովին։ Մինչև այդ ևս, հաւանօրէն, Կ. Պոլսի ազգ. երեսփ. ժողովը արձակած կը լինի իր վճիռը Օրմանեան արքեպիսկոպոսի գործի մասին։

Խօսելով մեր բարձրաստիճան և գլխաւորապէս կաթողիկոսական ընտրելիներ համարվող եկեղեցականների դէմ եղած ամբաստանութիւնների մասին, ես բարոյական պարտք եմ համարում մի քանի խօսք ասել Կարապետ եպիսկոպոսի մասին։

Կարապետ եպիսկոպոսը, ինչպէս յայտնի է, կաթողիկոսական հաւանական ընտրելիներից մինն է համարվում և, իբրև այդպիսին, նա ենթարկվեց իր համակրողների և հակառակորդների կողմից ջատագովական և պարսաւողական քննադատութիւնների։ Վերջերս նրա մասին տարածվեց և մի լուր, որ կարող էր վարկաբեկել նրան, նրա վարկը և հեղինակութիւնը վայր ձգել թէ՛ բարձր շրջաններում և ընտրողների աչքում։ Այդ լուրը վերաբերում էր նրա առաջնորդական գործունէութեանը Ատրպատականում։ Ասում են, որ նա գործիք է դարձել որոշ կուսակցութեան ձեռքում, որ նա ռուսական քաղաքականութեան և շահերի դէմ է գնում, իսկ այդ հանգամանքը կարող է զրկել Պարսկաստանի հայերին ռուսական հովանաւորութիւնից։ Եւ այդ ամենը կապվում էր Թաւրիզի ռուսաց ընդհանուր հիւպատոսի անձնաւորութեան հետ, որպէս թէ սա աննպաստ կարծիք է յայտնել Կարապետ եպիսկոպոսի գործունէութեան մասին։

Սակայն այժմ մենք ունենք մեր ձեռքի տակ մի դօկումենտ, որ ապացուցանում է, թէ Թաւրիզի ռուսաց կայսերական ընդհանուր հիւպատոս Ալէքսանդր Եակօվլեվիչ Միլլէրին վերագրված աննպաստ կարծիքը Կարապետ եպիսկոպոսի առաջնորդական գործունէութեան մասին՝ միանգամայն զուրկ է որևէ հիմունքից։ Ընդհակառակը, այդ դօկումենտը պարզ ցոյց է տալիս, որ ընդհանուր հիւպատոսը համարում է Կարապետ եպիսկոպոսին մի կրթեալ, գիտնական, անշահասէր և շիտակ անձնաւորութիւն, իր վարմունքի մէջ դէպի ռուսական պետութիւնը և քաղաքականութիւնը՝ լօյալ և հաւատարիմ և խիստ պիտանի իր հօտին, սիրված և յարգված թէ պարսից պաշտօնական շրջաններում և թէ եւրօպական պետութիւնների հիւպատոսներից, որոնք ամենքը բարեկամական լաւ յարաբերութիւններ են պահպանում նրա հետ, աջակցում նրան և յարգանքով վերաբերվում դէպի նա։

Ընդհանուր հիւպատոս պ. Միլլէրն այս մասին յայտնել է Կովկասի կառավարչական բարձր շրջաններին։ Հ. Ա.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Զոհերից մէկը

Բագու, 27 հոկտեմբերի

«Մշակի» մէջ մենք մի շարք թղթակցութիւններով բացատրեցինք, թէ որքան չարիքների են սպասում հայկական թաղի բնակիչները այն օրից, որ օրից հասարակաց կանանց բնակարանները քաղաքի տխրահռչակ «հայրերը» տեղափոխեցին հայկական թաղերը, դէպի «Զավակզալնայա» քաղաքամասը։

Մենք առ այժմ հրապարակի վրա ենք դնում պատահած զոհերից մէկը որպէս նմոյշ։

Համեստ արհեստաւորներից մէկը, հանգուցեալ Ս.-ն, որ երկար ժամանակ իր ճակատի քրտինքով իր ընտանիքն է կերակրել, կնոջ ու երեխաների տէր է, անցեալ ամիս իր ռոճիկը ստանալով՝ վերադառնում է տուն, որպէս զի տնատիրոջ ամսավարձը վճարէ, ամբողջ ամսվայ ապառիկ կերած կ՚իչկայով (ինչպէս սովորութիւն է ռոճիկաւոր միջակ դասակարգի մէջ) կենսական պիտոյքների փողը վճարէ, որ կարելի լինի նորից մթերք ձեռք բերել, նաւթի, ջրի և այլ պարտքերը վճարէ. Նա, հանգուցեալը, դեռ տուն չը հասած, իրանց բնակարանի հարևանութեան շարքում, ուր տեղաւորված են անբարոյական կանանց բնակարանները, պատահում է դրան առաջ նստած կանանցից մէկին, որի կտրի սիլի-բիլիներին զոհ է գնում անփորձ, դեռ այդպիսի կանանց կենսագրութեան ոչ-ծանօթ արհեստաւորը։

Վերջինս հրապուրվում է երիտասարդ աղջկայ արտաքին գեղեցկութիւնով, և երկուսով մտնում են ներս, կնոջ առանձնասենեակը։

Սկսվում է գարեջրից (շիշը 50 կ.), ներս են մտնում արհեստաւորին հրապուրող աղջկայ «ընկերուհիները», Պաշա-Մաշաները, և տուր ու կը տաս... Պարպվում են բազմաթիւ շշեր, համապատասխան «զակուսկաներ» և այլն և այլն, և խեղճ Ս.-ն մէկ էլ աչք է բացում և տեսնում, որ ամբողջ ռոճիկը արդէն վատնել է։ Մնում է երկու կրակի մէջ. եթէ յետ պահանջի գոնէ կէսը, պարզ է, որ չը պիտի տան, եթէ աղմուկ և կռիւ սարքէ, նախ պաշտպանութիւն չէ ստանալու, երկրորդ—որ մահու չափ հաւանած է—պիտի խայտառակվի ազգականներին, կնոջ և երեխաների առաջ...

Նա կէս գիշերին դուրս է գալիս կենդանի սպանդանոցից, գլուխը քաշ, ապուշ կտրած, քայլերն ուղղում է հակառակ իր բնակարանի, ուր սպասում են նրան ամբողջ ընտանեկան կազմից դուրս նաև պարտատէրերը։

Եւ ինչո՞վ է ուզում իրան պատժել համեստ արհեստաւորը...

Նա վերջին «գրոշին», մի քանի կոպէկները տալիս է թոյնի և մտնում քաղաքի կենտրոնում գտնվող «Մօլօկանսկի սադ» այգին, քաշվում մի մութ անկիւն և, որպէս ապաշխարանք, խմում է թոյնը։ Նրան կիսակենդան տանում են հիւանդանոց, ուր և աւանդում է հոգին, թողնելով անչափահաս երեխաներին և կնոջը առօրեայ հացի չոր կտորի կարօտ։

Այդ զոհի ամբողջ ծանրութիւնը ընկնում է քաղաքային վարչութեան ղեկավարների վրա, որոնք դիտաւորեալ կերպով թունաւորեցին իրանց ծանօթ թոյնով հայկական թաղը։

Երանի թէ այդ առաջին և վերջին դժբաղդութիւնը լինէր։ Ս. Գարագաշ

Անասնացաւը Ճակատէնում

Ղափան, 26 հոկտեմբերի

Հոկտեմբերի 20-ից սկսած տեղիս եղջերաւոր անասունների մէջ մի գաղտնի հիւանդութիւն է երևացել, որ աւելի նման է անասունների ժանտախտի, որից վարակված անասունը իսկոյն տեղնուտեղը սատկում է։ Երկու-երեք օրվայ ընթացքում այստեղ սատկել է 15 անասուն, որից մօտ 5-ը գոմէշ է, իսկ մնացածը կով, եզ և այլն։ Նման հիւանդութիւն երևացել է նաև մեզ մօտիկ հարևան Շիկահող գիւղի անասունների մէջ, որի մասին ժամանակին գրել էի «Մշակում»։ Արծւիկ

Պոստ. բաժանմունքի բացումը եւ ֆրանս. ընկ. աջողութիւնները

Ախտալի (կայար. Կարսի երկ.), 16 հոկտ.

Մօտ ժամանակներս այստեղ պօստային բաժանմունք բացվեց, ուր այսուհետև կը ստացվեն ապահովագրված նամակներ, փողեր և ծրարներ։ Բաժանմունքը բացված է աշխատութեամբ «Ալլահվերդի» պղնձահանքի ֆրանսիական ընկերութեան։ Այս հանգամանքը շատ օգտաբեր է և մօտ գտնված գիւղերի համար, որոնք են՝ Հաղբատ, Բաղէնք, Պղնձահանք, Շամլուղ, Այրում, Ճոճկան, Արճիչ, Շնող, Ախտալի (Մէյրամանա) և Արամեանցի դասակերտ։ Բաժանմունքի բացման պատճառն էլ ֆրանսիական ընկերութեան մի այլ պղնձահանք ձեռք բերելն է։ Մօտ անցեալում յիշեալ ընկերութիւնը Ղազախի Կողբ գիւղի մօտ պղնձահանքով շատ հարուստ մի սար է վերցրել, որտեղից, ինչպէս լսում ենք, գիւղական պայմանի համաձայն, ընկերութիւնը միայն հանքաքարերն է իր կառուցանելի նեղուղի երկաթուղով տանելու Ախտալա կայարանը և ապա այնտեղից պղնձահանք Ալլահվերդին՝ մեքենաներում վերջնականապէս մշակելու։ Հում նիւթը դուրս տանելու պատճառն էլ այն է, որ գիւղացիք շատ են վախենում մեքենաների ծխից առաջացած մեծ վնասներից թէ իրանց այգիներին և թէ իրանց մալին, և իրաւացի է այդ երկիւղը։ Հէնց այդ ծուխն է, որ մեծ վնասներ է տուել Ալլահվերդիի պղնձահանքի շրջակայքում եղած Հաղբատի, Ուռնակայ, Սանահնի, Ազբուլաղ, Հագուու և Օձնայ գիւղերի ցանքսերին և պտղատու բուսականութեանը. զարմանալի է, որ ընկերութիւնը շատ անտարբեր է գտնվում այս վերաբերմամբ դէպի այդ թշուառ գիւղերին հասցրած վնասները. իմ կարծիքով՝ պէտք է մի ընդհանուր կօլլէկտիվ խնդրագրով դիմել կառավարութեան աջակցութեանը։ Հաղբատեցի

ԿԱԹ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Շուշի, 30 հոկտեմբերի

Այսօր, ամսիս 30-ին, թեմական դպրոցի դահլիճում կայացաւ կաթողիկոսական ընտրութեանը մասնակցելու համար Ղարաբաղի թեմի աշխարհական պատգամաւորի ընտրութիւնը։

Ընտրողների ձայները թւով պէտք է լինէին 44, բայց ներկայ էին 38 հոգի, որոնցից 12-ը քաղաքի ազգաբնակութեան կողմից, իսկ մնացեալները՝ թեմի զանազան կողմերից։

Նախագահ Ջալէն վարդապետը կարդաց ընտրութեան վերաբերեալ կանոնները և հրահանգները, որից յետոյ ստուգվեց ընտրողների ներկայ գտնվող թիւը։ Երբ յայտնվեց, որ ներկայ եղողների թիւը իրաւունք է տալիս ընտրութիւն անելու, Ջալէն վարդապետը առաջարկեց ընտրողներին, որ նրանցից ամեն մէկը գաղտնի քուէներով (թերթիկներով) առաջարկէ թեկնածուներ, որի հետևանքն այն եղաւ, որ առաջարկվեցին 7 թեկնածուներ։ Սրանցից 2-ը—Ս. Ջէրքէզեան և Մ. Ղոնդաղսազեան—որոնք ձայների առաւելութիւն ունէին, ընդունվեցին քուէարկվելի թեկնածուներ։

Սկսվեց այդ երկու թեկնածուների քուէարկութիւնը դարձեալ գաղտնի քուէարկութեամբ (տուփերով)։ Նախագահը ինքն անձամբ տալիս էր տուփերն մօտեցող պատուիրակին քուէի գնդակները, և պատուիրակները քուէ էին տալիս և ստորագրում առանձին թերթի վրա։ Քուէարկութիւնը աւարտելուց յետոյ հայր նախագահը համարեց քուէները, որից երևաց, որ Ս. Ջէրքէզեան ստացել է 31 սպիտակ և մի սև, իսկ Մ. Ղոնդաղսազեան 23 սպիտակ 9 սև։

Այսպէս ուրեմն, Ղարաբաղի թեմի պատգամաւոր է ընտրված Ս. Ջէրքէզեան և նրա փոխանորդ՝ Մ. Ղոնդաղսազեան։

Այստեղ պէտք է աւելացնել և այն, որ ընտրութեան ժամանակ 6 հոգի ձեռնպահ մնացին։

Ջալէն վարդապետը ընտրութեան վերաբերեալ բոլոր կանոններն ամենայն ճշգրտութեամբ իրագործում էր։

Պօղ. Զաքարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Նոյեմբերի 3-ին արագ գնացքով Պետերբուրգ մեկնեց Վրաստանի էկզարխ Ինոկէնտի արքեպիսկոպոսը։ Ճանապարհ դնելու համար կայարան էին գնացել նահանգապետ Չէրնեավսկին, Արխիպովը, Պիմէն եպիսկոպոսը և այլն։ Էկզարխը բացակայ է լինելու մի ամսից աւելի։

◆ Մօտիկ ապագայում կը ձեռնարկվի Սղնախից Շամախի երկաթուղի կառուցանելու նախնական հետախուզական աշխատանքներին։ Կոնցեսիոներ հանդիսանում է «Սիգրա» ակցիօներական ընկերութիւնը փայերով (իւրաքանչիւրը 1000 ր.)։ Գործի գլուխ կանգնած են իշխ. Թումանով, Եսանդուլեան, Փրիդոնեան, Ղորղանեան, Կօֆմովսկի և այլն։

◆ Մինիստրների խորհուրդը հոկտ. 27-ի նիստում թոյլ տուեց արտաքին գործերի մինիստրին առաջադրութիւն անել Դումային՝ հիմնելու փոխ-հիւպատոսարան Խօյում, որի նպատակն է լինելու ծանօթանալ Հիւսիսային Պարսկաստանի կեանքի հետ, նաև ծառայելու Խօյում ապրող բաւական մեծ թւով ռուսների շահերին։

◆ Թիֆլիսի բօրսային կօմիտէտը միջնորդութիւն է յարուցել կառուցանելու երկաթուղի Թիֆլիսի և Թաւրիզի միջև։

◆ Էջմիածնից «Ю. К.» թերթին գրում են ի միջի այլոց պրոֆ. Պրախօվի այցելութեան մասին հետևեալը. «Պրոֆէսորին ուղեկցող նկարչուհի Դաւիդենկօն Էջմիածնի թանգարանում գտաւ իտալական շկօլայի մի հազուագիւտ պատկեր։ Ըստ երևոյթին այդ պատկերի արժէքի մասին թանգարանը պահպանողները ոչ մի տեղեկութիւն չունէին, որովհետև նա պահվում էր կեղտոտ, առանց պատշաճ խնամքի։ Տիկինը ինքն անմիջապէս լուացել է պատկերը և ծածկել լաքով»։

◆ Այսօր, շաբաթ, տեղի կունենայ Alliance Française ընկերութեան երեկոյթը, Տիգ. Նազարեանցի Գեղագիտական սալօնում (Գօլովինսկի № 41)։ Երեկոյթի երաժշտական բաժինը շատ ճոխ է կազմված։ Երեկոյթից յետոյ ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը պիտի կայանայ, նոր վարչութիւն ընտրելու համար։ Վարչութեան այժմեան նախագահ Ա. Սարուխանի տեղ, որ Թիֆլիսից հեռանալու պատճառով հրաժարական է տուել, պիտի ընտրվի նոր նախագահ, նորակազմ վարչութեան անդամներից։ Երեկոյթի սկիզբն է ժամը 8-ին։

◆ Թիֆլիսի հասարակական կլուբում այսօր, երեկ. ժամը 8-ին, Ի. Գուլիեւովը կը կարդայ ռեֆերատ՝ Կովկասում զեմստվային հաստատութիւններ մտցնելու մասին։ Ռեֆերատից յետոյ տեղի կունենայ զրոյց, իսկ վերջում՝ գրական-երաժշտական բաժին։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան 1912 թ. ծախքերի նախահաշւով որոշված է կառավարական հաստատութիւնների պահպանութեան համար 18,964 ր., քաղ. ինքնավարութեան և որբերի դատարանի պահպանութեան համար 230,185 ր., ոստիկանութեան պահպանութեան համար 282,061 ր., հրշէջ խմբի պահպանութեան՝ 22,630 րուբլի։

◆ Կախէթիայի երկաթուղու կառուցման նախնական աշխատանքների վրա հսկող նշանակված է ինժեներ Բախմանինը, սրա օգնական՝ ինժեներ Զմուտօվ։

◆ Ամսիս 7-ին, երկուշաբթի, Արտիստական թատրոնում դրամատիկական խմբի հերթական ներկայացմանը տրվելու է Սումբաթօվի «Դաւաճանութիւն» յայտնի պիէսը։ Մասնակցում են խմբի բոլոր ուժերը։ Այս պիէսը, որ առաջին անգամն է տրվում այս տեսակ ուժեղ անսամբլով (տիկ. Սիրանոյշ, Ց. Աբէլեան, Սևումեան և միւսները), լինելու է հետաքրքրական խաղի տեսակէտից։

◆ Մենք ստացանք Պետերբուրգից, Փ. Շչեպանսկիի հրատարակութեամբ լոյս տեսած երկու ձեռնարկ-գրքոյկ հետևեալ վերնագրերով՝ 1) Проф. Шмидтъ. „250 отвѣтовъ на фотогр. вопросы“, 2) Г. Шмидтъ, „Справочн. книжка для фотографирующихъ съ негативъ—реестромъ“. Առաջին գրքոյկն արժէ 1 ր. 25 կ., իսկ երկրորդը՝ 60 կ.։ Յիշեալ գրքոյկները բաւական ամփոփ և հարուստ ցուցումներ և գործնական տեղեկութիւններ են տալիս լուսանկարչական արհեստին վերաբերեալ։ Մասնագէտ հեղինակները կազմել են դրանց՝ օգտվելով վերջին ժամանակներս լուսանկարչական ասպարէզում առաջ եկած նոր կատարելագործութիւններից։

◆ Նոյեմբ. 7-ին, դերասան Գ. Միրաղեանի ղեկավարութեամբ, Վրաց ազնուականութեան թատրոնում կը տրվի «Բեռլին քաղաքի կործանումը» պիէսը։

◆ Առողջութեան գործերով Թիֆլիս է եկել Բագուի քաղաքապետ Մարտինովը։

◆ Շօլլարի ջրանցքի առիթով Պետերբուրգ է մեկնել Բագուի քաղաքագլուխ Ն. Ռաէվսկին։ Նրան փոխարինելու է քաղ. վարչութեան անդամ Դ. Ցարութիւնեան։

◆ Գանձակի նահանգի երեք գաւառներում գտնվել են 16,515$^1/_2$ դեսեատին տարածութեան վրա մորեխի բներ։ Ջիվանշիրի գաւառում նոյնպէս երևան են հանվել մորեխի բներ։ Կան նաև Գանձակի, Ղազախի և Նուխու գաւառներում։ («Ю. К.»)

◆ Այս տարի Երևանում բամբակի բերքը ստացվեց պակաս՝ վաղահաս ձիւնի պատճառով։

◆ Բագուի նահ. դատարանը, քննելով ոմն Աղա-Բալա Գուլիեվի մասնաւոր գանգատագրի առիթով «Каспій» և «Баку» լրագիրների խմբագիրներ Անդրէյ Վէյլէրգի և Քր. Վերմիշեանի գործը, որոնք մեղադրվում էին մամուլի մէջ զրպարտութիւն տպելու մէջ, կէս ժամ խորհրդակցելուց յետոյ երկու մեղադրեալներին դատապարտեց երկու ամսով բանտարկութեան։

ՏԵՂԵԿ. ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Հանգուցեալ Ն. Ցխվեդաձէի դերեզմանի վրա Թաղման օրը դամբանականներ

Ների մեհեաններից։

Եթէ հնութեան փշրւող ծանրութեան տակից կարօղանային բարձրանալ ու լեզու ունենալ Եփեսոսի, Աթէնքի, Տրոյայի, Բալբէկի և այլ բազմաթիւ մեհեանների ու տաճարների և յետ պահանջէին իրանց բեկորներն Այա-Սօֆիայից, ապա նրանից ոչինչ չէր մնայ իր տեղում, բացի կրի ու աւազի անկերպարան շաղախից։ Նա՝ այդ հրաշագեղ տաճարն ամբողջովին կողոպուտ է՝ յափշտակած Յուստինիանոսի ձեռքով Զևսից, Վեներայից, Աթենաս-Պալլասից, ի պատիւ և ի շահ Քրիստոսի, իսկ պատմական արդարութեան պահանջմամբ՝ նա նորից կողոպտված է Քրիստոսից ի պատիւ և ի շահ Մուհամմեդի։

Եւ ո՞վ գիտէ,—Իսլամի օրերը հաշուած են Եւրօպայում,—չի՞ գայ արդեօք մի ժամանակ, երբ այդ անգնահատելի կողոպուտը նորից յանձնվի արևի, լոյսի, կեանքի ու խնդութեան աստուածների նորագոյն ժառանգորդ հայրապետին՝ գիտութեան աստուծուն։ Դա մի գերագոյն արդարութիւն կը լինէր՝ արժանի անյաղթ Նեմեզիդային։ Ապա թէ ոչ Իսլամը... Տէր Աստուած, ինչ է արել նա այդ հրաշալիքը, ինչ բարբարոսական խաղ է խաղացել նրա գլխին։ Նայեցէք այն անճոռնի վիթխարի վահանները, որոնք կախված են սեղանի կամարների երկու կողմում՝ արաբական անհագին տձև տառերի մակագրութեամբ. վահաններ, որոնք ոչ մի կապ ու առնչութիւն չունեն տաճարի աննման ներդաշնակութեան հետ։ Նայեցէք այն բիւզանդական սուրբերի մօզայիկ պատկերներին՝ նուրբ արուեստի կատարելատիպ գործերին, որոնց երեսին սպիտակ սուաղ է քսված և որոնց տխուր դէմքերը տեղ-տեղ երևում են սուաղի տակից։ Նայեցէք դեղնագոյն անշնորհք խսիրներով ծածկված այս յատակին, որի մարմարեայ սիրուն մանրանկարները բողոք են բառնում Իսլամի դէմ խսիրների արանքից։ Նայեցէք այն անճաշակ կոպիտ ամբիոնին սեղանի ձախակողմում, որի վրայից, երեւի, մօլլաները խրատների տարափ են թափում ուղղահաւատների վրա և որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի աղտոտ բիծ տաճարի անպաճոյճ փառահեղութեան մէջ։ Նայեցէք, վերջապէս, խումբ-խումբ չոքած այս երիտասարդ կրօնաւորների դեղնագոյն, հիւծված ու մաշված դէմքերին, որոնք անընդհատ յետ ու առաջ օրօրվելուց արբեցութեան աստիճանի են հասած։ Իսկ այն փաթթոցաւոր «աղօթասէրները» խմբերը,—որպիսի աններդաշնակութիւն։ Ծալապատիկ նստած ու թեք ընկած՝ նրանք անհոգ ժամանցի զրոյցներ են անում, կարծես, սրճարանում զգալիս լինեն իրանց։

Ո՛չ Իսլամի տեղը չէ այդ հրաշալիք տաճարը։

Երբ ես նայում էի տաճարի այս ու այն կողմում ցրված այդ թիւրք խայտաբղէտ բազմութեանը՝ մի ներքին անզուսպ գայրոյթ էր խօսում իմ մէջ. ես կը կամենայի մի հարուածով դուրս շպրտել գեղեցկութեան սրբավայրից այդ բթամիտ, ոչխարահայեաց դէմքերը և խլելով նրանցից տաճարը՝ յանձնել, գէթ առ ժամանակ, յոյներին, նրա նախկին տէրերին, որոնք երևի անսահման անձկութեամբ են նայում Յուստինիանոսի աննման ձեռակերտին, երբ շտապ-շտապ անցնում են նրա մօտից։

Մի վայրկեան մտքիցս անցաւ Կարսն ու նրա եկեղեցիներից մէկը... Յիշեցի յանկարծ ես այն օրը, երբ կանգնած այդ եկեղեցու առաջ՝ գլխակոր նայում էի նրա պատերին, դռներին, պատուհաններին։ Յիշեցի մի ճնշող զգացմունք, մի խուլ ցաւ իմ սրտում... Այդ վաղուց անցած-գնացած ժամին, անշուշտ, կրօնական նախանձախնդրութեան զգացմունքը չէր, որ խօսում էր իմ մէջ, այլ մի աւելի դառն զգացմունք—անարդարութեամբ զրկվածի ու թալանվածի անզօր զգացմունքը։

Մինչ ես այս մտքերով էի տարված, կինս յանկարծ վեր թռաւ տեղից,—նա տկար լինելով չոքել էր խսիրի վրա,—ու վախեցած մօտեցաւ ինձ։

— Հը՞, ինչ եղաւ, ինչ պատահեց. ինչի՞ց վախեցար,—հարցրի ես։

Նա մի բոպէ ժպտաց իր երկիւղի վրա։

— Գիտե՞ս, այստեղ... խսիրների վրա...

— Յետո՞յ, խսիրների վրա ինչ։

Կինս նայեց Տիգրան Զալէնին ու վայրկենական տատանումից յետոյ փսփսաց իմ ականջին։

— Պարազիտներ են ման գալիս...

Քիչ էր մնում, որ ես բարձրաձայն ծիծաղէի՝ իմանալով այն զարհուրելի պատճառը, որ այդպիսի սարսափ էր ցցել նրա վրա։

— Մի թէ տեսար։

— Ի հարկէ. և ոչ թէ մի հատ...

Կնոջս սրտատեսութիւնը խօսելիք է դարձել մեր ծանօթ-բարեկամների շրջանում։

— Գնանք, գնանք,—սկսեց շտապեցնել նա,—երկար մնալն այստեղ վտանգաւոր է։

Ես և պ. Զալէնը մտանք մի կողմնակի սենեակ, ուր հրաւիրում էր մեզ մզկիթում ծառայող կրօնաւորներից մէկը, անշուշտ բաղշիշ ստանալու նպատակով։ Այնտեղ զետեղված էր Այա-Սօֆիայի գրադարանը, որ ոչ մեծ էր և ոչ հարուստ։ Մի քանի արաբական հին ձեռագրեր, ինչպէս նաև 9-րդ թէ 10-րդ դարի մի ձեռագիր Ղուրան տեսնելուց յետոյ, որ ճիշդ մեր գրչագիր աւետարանների նման զարդարված էր մանրանկարներով, մենք դուրս եկանք տաճարից և կառք նստելով վերադարձանք շոգենաւ։

—

Անցել էր այդ օրից երկու շաբաթ։ Ժընևի պանսիոններից մէկում, «Պլէն-Պալէյի» հրապարակի վրա, ես և կինս՝ ամուր փակելով սենեակի դռներն ու պատուհանները՝ մաքրում էինք մեր գլուխները... Այա-Սօֆիայի պարգևից։

Կինս քիչ էր մնում լաց լինէր. նա ջղային թափով քերծում էր գլուխը խիտ սանրով և անէծքներ թափում հրաշագեղ տաճարի գլխին։

— Ամօթ, խայտառակութիւն,—բացագանչում էր նա,—ինչ կասեն մաքրասէր շվէյցարացիները, եթէ նոյնիսկ մի հատիկ գտնեն այս գարշելիներից մեր շորերի ու անկողինների վրա. չեն ասի, թէ սրանք մարդիկ չեն, այլ վայրի անասուններ...

Խեղճ, հրաշագեղ տաճար. նա մեղք չունէր։ Մեղքը ուրիշինն էր։

Ախ թիւրքեր, թիւրքեր,—շշնջում էի ես,—դարերով դուք ոչ մի շնորք ցոյց չը տուիք, բացի պարազիտ դառնալուց ու պարազիտ բազմացնելուց։ Եւ բարկութեան բոպէին թիւրքական ամբողջ ցեղն ինձ թւում էր մի հսկայական պարազիտ, մի նողկալի մակաբոյծ, իր զզուելի ճանկերով ու արիւնոտ բերանով կպած Եւրօպայի, Ասիայի ու Աֆրիկայի համբերատար ազգերի մարմիններին...

Ս. Մխիթարեան

արտասանեցին Դիդուբէի եկեղեցու աւագերէց Թալակվաձէն, Թիֆլիսի գաւառական ազնուականութեան պարագլուխ իշխան Գ. Թումանովը, քաղաքագլխի պաշտօնակատար իշխան Ա. Արղութեան-Երկայնաբազուկը, վրաց գիմնազիայի վերատեսուչ Ա. Մգլիվանին ու աշակերտ Գամրեկելին և բանաստեղծ Ա. Ծերեթելին։

◆ Ի յարգանս հանգուցեալ Ն. Ցխվէդաձէի յիշատակի, հինգշաբթի, ամսիս 3-ին, վրաց թատրոնում տեղի ունենալիք Վ. Փափազեանի «Ժայռ» պիէսի ներկայացումը յետաձգվեց կիրակի, նոյեմբերի 6-ին։

◆ Ն. Ցխվէդաձէի դին ամփոփվեց վրաց յայտնի բարեգործ Դ. Սարաջիշվիլիի գերեզմանին կից։ Ցխվէդաձէն և Սարաջիշվիլին անձնական մօտ բարեկամներ էին և վերջինս իր մահվանից առաջ յայտնել էր այդօրինակ ցանկութիւն։

◆ «Սախալխո Գազէթի» № 441-ում զետեղված է «Սուրհանդակ» թերթի № 426-ի մէջ զետեղված առաջնորդող յօդուածը քաղաքային ընտրութիւնների առիթով, որով խմբագրութիւնը վրաց ինտելիգենցիայի «Թթու Նացիոնալիզմի» մասին է խօսում։

◆ Հանգուցեալ Ն. Ցխվէդաձէի մահվան առիթով Վրաստանի այլ և այլ անկիւններից ստացվում են բազմաթիւ ցաւակցական հեռագիրներ թէ անհատներից և թէ հասարակական հիմնարկութիւններից։ Ինչպէս տեղական, նոյնպէս և գաւառական վրաց հասարակական հաստատութիւնները որոշել են ի յաւերժացումն Ն. Ցխվէդաձէի յիշատակի բարեգործութիւններ անել։

◆ Այս ամառ սինեմատօգրաֆի ժապաւէններ արտադրող Պաթէ ընկերութիւնը պատուիրեց վրաց դերասան Շալվա Դադիանիին պատրաստել վրաց կլասիկ բանաստեղծ Շօթա Ռուսթավէլիի «Վէփխվիս Տղաօսանի» (Ընձենաւորը) պօէմայի լիբրէտօն։ Շ. Դադիանին արդէն աւարտել և ըստ պատկանելոյն ուղարկել է այդ պատէրը։

◆ Վրաց բեմի տաղանդաւոր և բազմաշխատ դերասանուհի հայազգի Մ. Սափարօվա-Աբաշիձէի յօբելեանական մասնաժողովը որոշել է իր կազմը լրացնելու համար հրաւիրել նաև հայ թերթերի խմբագրութիւնների ներկայացուցիչներին։

◆ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան գլխաւոր վարչութիւնը իր վերջին նիստում որոշել է գրադարան բանալ Օզուրգէթի գաւառի Ջօխաթի գիւղում։

◆ «Սախալխո Գազէթի» լրագրի թղթակիցը նկարագրում է Գորու գաւառի Սկրա գիւղում հոկտեմբերի 28-ին գազանաբար սպանված կաթօլիկ քահանայ Դօմինիկէ Մուղաշվիլիի մանրամասնութիւնները։ Թղթակիցը գրում է, որ հանգուցեալը վերջերս թողնված էր առանց ծխականների և ապրում էր յիշեալ գիւղում, շնորհիւ «հայ-կաթօլիկ եկեղեցականների ինտրիգների»։ Աւազակները թալանելով քահանային սպանել են նրան և ապա անհետացել գիւղից։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արտիստական թատրոնում

Նոյեմբերի 3-ին, ռուս դրամատիկական խումբը ներկայացրեց առաջին անգամ Ե. Չիրիկովի 4 արարուածով «Шакалы» տրագի-կօմեդիան։

Պիէսի նիւթը նորութիւն չէ ներկայացնում։ Համեղ պատառից, ոսկու հոտից նեխելի թէ աններելի միջոցներով մի մասնիկ պոկելու ձգտումը վաղուց քաղաքացիական իրաւունք է ստացել արդի մերկանտիլ կեանքում մարդ-չախկալների մէջ...

Ահա ձեզ այս անգամ մի հարուստ ծերունի, որ գտնվում է մահվան ճիրաններում։ Նրա անկողնու շուրջը վխտում են թեթև ոսկի սիրահարները, որոնք ապագայ ժառանգութիւնը իւրացնելու ագահ տենչով են միացած ու զանազան մութ միջոցներ հնարելով են զբաղված։ Ծերունու 12 տարիների «կենաց ընկեր» Եկատերինայի եղբայր Նիկօլան խորամանկութեամբ համոզում է քրոջը կեղծ կտակը արդարացնել վարձկան վկաների ստորագրութեամբ։ Քոյրը՝ արդէն յոգնած իր ծերունի խանդոտ ամուսնու ձեռքին «սիրուհու» դերից՝ համաձայնում է եղբօր առաջարկին, մանաւանդ որ համակված է երիտասարդ բժիշկ Կօրօլօվի հետ ամուսնանալու ցանկութեամբ ու ապագայ հանգիստ երջանկութեան հեռանկարով։

Սակայն երբ գալիս են երկու վկաները, ծերունին արդէն մահացած է լինում։ Հնարագէտ Նիկօլան հարկադրում է բժշկին մի քանի րօպէ մեռածին փոխարինել՝ պառկելով անկողին։ Բժիշկը, որի բարոյական պատկերը երևում է նրանից, որ մի գթութեան քրոջ հետ գաղտնի սիրային կապ էր ունեցել, և որից ունի մի աղջիկ, նոյնպէս ապագայ հարստութեան ուրախութիւնից չէ վարանում Նիկօլայի պահանջը կատարելու։ Ասես բանը գլուխ է գալիս, կտակը կը հաստատվի և կը բաղդաւորեցնէ «ժառանգներին», երբ յանկարծ երևան են գալիս նոր «չախկալներ»։ Սկսվում են սաէ-կօսներ, լրագիրներում մերկացումներ են տպվում, թէ ինչու ծերունին ոչինչ չէ թողել իր առաջին օրինաւոր կնոջից ունեցած միակ որդու ժառանգին։ Նիկօլայը հոտ առնելով գալիք անախորժութիւններից՝ առաջինը ձեռք է լուանում ձեռնարկած «գործից», իսկ պարոն բժիշկը մի փոքր մտածելուց յետոյ վազում է կողքի սենեակը և անձնասպան լինում։

Պիէսը սկզբից նայվում է հետաքրքրութեամբ իր յաջող բեմադրութեան և ռէալ, կենսական տիպերի առաւելութեան պատճառով։ Սակայն բացի մի քանի աւելորդաբանութիւնից, վերջաբանը անմշակ ու շտապողականութեան կնիք է կրում, որից և «տրագի-կօմեդիայի» տպաւորութեան ոյժը նսեմանում է։

Ռուս դերասանական խումբը պիէսը խաղաց հարթ։ Տղամարդկանցից աչքի ընկան Դիեվսկի (Նիկօլայ), Դմիտրեվ (1-ին վկայ), կանանցից՝ Գրէմինա (Եկատերինա), Պօբէդօվա (մայր)։ Ե.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 4 նոյեմբերի

Վերջին ժամանակներս գրական բարքերի մի տեսակ ապականումն է առաջ եկել, որի առաջը պէտք է առնել. խօսքս թատրօնական գրուածքների մասին է։ Աղաւաղել կամ պիէսի վերնագիրը և կամ բաց թողնել թարգմանչի անունը՝ դա այլանդակ և աններելի բան է, որը կարծես սովորական բան է դառնում մեր մէջ։

Հոկտեմբերի 6-ին Հաւլաբարի ակումբում հայկական սէկցիայի խումբը խաղաց «Ցիմար» 2 գործ. կօմ. Ցագարէլիի. սա իմ թարգմանած և մասամբ փոխադրած «Բայղուշ» պիէսն է, որը ժողովրդականութիւն է վայելում հայ բեմի վրա։ Ինձ զարմանք պատճառեց, թէ ինչու են փոխել վերնագիրը և ինչու բաց թողել թարգմանչի անունը. ուզում էի դիմել մամուլին, բայց յետոյ անձամբ դիմեցի վարչութեան անդամներից մի քանիսին, և նրանք հաւատացրին, որ այդ թիւրիմացութիւնը կատարվել է կլուբի քարտուղարի շնորհիւ. հաւատացի. բայց կլուբի քարտուղարը կարող էր պիէսայի անունը չիմանալով սխալ թարգմանել—ընդունում եմ, բայց թարգմանչի անունը չէր կարող «ինքնագլուխ» ջնջել, եթէ նա աֆիշի վրա գրված լինէր. ինչ և իցէ։

Զարմանքս աւելի մեծ եղաւ, երբ հոկտ. 27-ին նոյն ակումբում նոյն սեկցիան խաղաց նորից իմ ուրիշ պիէսը՝ «Ինչպէս դարձաւ նա խմբագիր» կօմ. 2 գործ. Մարկ Տուէնի, դարձեալ բաց թողնելով թարգմանչի անունը յայտարարութեան մէջ թէ հայերէն և թէ ռուսերէն. կարծում եմ՝ արդէն այստեղ թիւրիմացութիւն չէ, այլ մի որոշ միտում և արհամարհանք դէպի իմ անձնաւորութիւնը։

Սրտանց ցաւում եմ, որ այդպիսի զեղծում կատարողը մի պատկառելի ընկերութիւն է, որը կրում է հայկական սեկցիա անունը և որի մէջ գտնվում են ինտելիգենտ անդամներ, գլուխ ունենալով եւրոպական կրթութեամբ յարգելի Արմէնեանին։

Ես սկզբունքով միշտ համակրել իմ ժողովրդական գործունէութեանը բառիս լայն մտքով, նուիրվել եմ ինքս նրան, շատ անգամ էլ աջակցել եմ հայկական սեկցիային և ոչ ոքին առիթ չեմ տուել այդպիսի վերաբերմունք ունենալու դէպի ինձ։

Խոնարհաբար կը խնդրէի, պարոններ, որ այդպիսի երևոյթ տեղի չունենայ ապագայում, որովհետև ոչ ձեզ է վայել և ոչ ինձ. իմ ազգանունը աֆիշայի վրա ձեր գործունէութեան արժանաւորութիւնը, կարծում եմ, չի նսեմացնի։

Դերասան Գեդէոն Միրաղեանց

Թիֆլիս, 27 հոկտեմբերի

«Մշակի» № 224-ում Ֆօրստէրը Ղալաչա գիւղից «Ղազախեցիների անտարբերութիւնը» յօդուածում իմ վերաբերութեամբ հետևեալ տողերն է շարադրում. «Աբէլ Ամիրաղեանցը հակառակ իր կամքի, միմիայն գիւղացիներին պատժելու համար, մտադրվել է Կ. Հ. Բ. Ընկ. նպաստը յետ դարձնել և շինութիւնը իր համար վերցնել»։

Պարտք եմ համարում, իսկական ազգանունովս յայտարարել ի լուր աշխարհի, որ 1) Կ. Հ. Բ. Ընկերութիւնը այդ նպատակի համար ոչ մի կոպէկ չէ յատկացրել, որ ես վերադարձնէի, և 2) երբէք մտադրութիւն չեմ ունեցել իմ ծախսով շինված դպրոցի շէնքը ինձ համար վերցնել։

Առաջին կէտի վերաբերութեամբ խնդրում եմ Կ. Հ. Բ. Ընկ.-ը՝ յայտնել, թէ դպրոցի շինութեան ծախքին որևէ քանակի դրամով մասնակցել է թէ ոչ. իսկ երկրորդի համար Ֆօրստերի վրա պարտք է մնում յայտնելու, թէ ինչ փաստեր ունի իր ասածի համար։

Կը սպասեմ պատասխանի։

Աբէլ Ամիրաղեան

ՎՃԻՌ*)

Դաշնակցական կուսակցութեան նախաձեռնութեամբ Պարիզում հրաւիրված յեղափոխական դատարանը «Նոր-Դար» հայ լրագրի խմբագիր Սպանդար Ամիրջանեան Սպանդարեանցի և Դաշնակցութեան գործի մասին, որ յարուցվել էր Դաշնակցական կուսակցութեան կենտրօնական օրգան «Դրօշակում» Սպանդարեանի՝ ոստիկանական դեպարտամենտի հետ յարաբերութիւն ունենալու մէջ մեղադրութեան հրատարակութեամբ։

Դատարանի կազմն էր՝ Ա. Ֆ. Ֆէյտ, որին դատաւոր էր ընտրել սօց.-յեղափոխական կուսակցութիւնը, Վ. Ի. Իգօրեվ, որին դատաւոր էր ընտրել Ռուսաստանի սօց.-դեմօկրատական բանւորական կուսակցութիւնը, և Ա. Ֆ. Ստաալ, որին դատաւոր էին ընտրել վերոյիշեալ երկու դատաւորները և միաժամանակ նաև նախագահ նշանակել։

Քննելով դատարանին ներկայացրած փաստաթղթերը, լսելով էքսպերտների եզրակացութիւնն ու վկաների ցուցմունքները, ինչպէս նաև Սպ. Սպանդարեանի և Դաշնակցութեան ներկայացուցչի բացատրութիւնները, հետևեալ հարցերը դրվեցին վճռելու.

1) Հաստատվա՞մ է արդեօք այն բանը, որ դատարանում յայտնի եղած հանգամանքներով Սպանդարեանը ծառայելիս է եղել ոստիկանական դեպարտամենտում։

2) Հաստատվա՞մ է արդեօք այն բանը, որ Սպանդարեանը (կամ նրա գիտութեամբ նրա ընտանիքը)՝ նրա վիճակը թեթևացնելու և կամ այլ պատճառներով դրդեց Կոնստանդին Սպանդարեանին ծառայութեան մտնել ոստիկանական դեպարտամենտ։

3) Հաստատվա՞մ է արդեօք այն բանը, որ Սպանդարեանը՝ Կոնստանդին Սպանդարեանի ոստիկանական դեպարտամենտ ծառայութեան մտնելուց յետոյ աջակցեց նրան քաղաքական լրտեսութեան գործում։

4) Արդեօք Դաշնակցութիւն կուսակցութիւնը բարեխղճօրէն վարվեց՝ մեղադրելով Սպ. Սպանդարեանին ոստիկանական դեպարտամենտի հետ յարաբերութիւն ունենալու համար, տպագրելով այդ բանը, և արդեօք նա հիմք ունէր փաստերը մեղադրութեան համար արժանահաւատ համարելու։

5) Արդեօք Դաշնակցութիւն կուսակցութեան կողմից չէ՞ խախտվել մարդուն պատկանած ձևական ապահովութեան իրաւունքը, որի դէմ Դաշնակցութիւնը հրապարակով այդպիսի մեղադրանք է անում։

Հարցերից առաջին երեքին դատարանը բացասական պատասխան տուեց։ Դատարանում գործի բացայայտված հանգամանքները ոչ միայն չը հաստատեցին ա) Սպանդարեանի մեղադրութիւնը ոստիկանական դեպարտամենտի հետ յարաբերութիւն ունենալու մէջ անմիջապէս կամ իր եղբայր Կոնստ. Սպանդարեանի միջոցով, բ) որևէ ճնշում Կոնստ. Սպանդարեանի վրա՝ դեպարտամենտ ծառայութեան մտնելու նպատակով և գ) աջակցելով Կոնստ. Սպանդարեանին քաղաքական խուզարկութեան գործին, այլ և չեն կարող հիմք ծառայել կասկածելու Սպ. Սպանդարեանին այդ տեսակ վարմունքների մէջ։

Չորրորդ հարցին դատարանը դրական պատասխան է տալիս։ Նախքան Սպ. Սպանդարեանի դէմ «Դրօշակում» հրատարակելը ամբողջ հանգամանքը այնպէս էր, որ Դաշնակցութիւն կուսակցութիւնը բաւականաչափ հիմունք ունէր մեղադրանքը համարելու լիովին հաւատալի, անկեղծօրէն համոզված էր Սպ. Սպանդարեանի մեղաւորութեան մէջ, հետևապէս գործել է լիովին բարեխղճօրէն՝ տպելով այդ մեղադրութիւնը։

Հինգերորդ հարցին դատարանը դրական պատասխան է տալիս։ Աչքի առաջ ունենալով, որ այդ մեղադրութիւնը զետեղված է յեղափոխական կուսակցութեան կենտրօնական օրգանում, որ նրա արժանահաւատ լինելը յենված էր բացառապէս կուսակցութեան հեղինակութեան վրա և որ կուսակցութիւնը դրա բոլոր պատասխանատուութիւնը իր վրա է վերցնում, դատարանը գտնում է, որ Դաշնակցութիւն կուսակցութիւնը՝ նախքան մեղադրանքը հրատարակելը՝ պարտաւոր էր այդ մասին տեղեկացնել Սպ. Սպանդարեանին։

Այս ձևական պարտաւորութիւնների կատարումը այս դէպքում կարող էր ազատել կուսակցութեանը ակամայ սխալից, իսկ Սպ. Սպանդարեանին էլ՝ իր բարի անունն արատաւորող ծանր հետևանքներից։

Ինչ վերաբերում է Սպ. Սպանդարեանին նիւթական վարձատրութիւն տալու հարցին Դաշնակցութիւն կուսակցութեան կողմից այն վնասների համար, որ պատճառել էր նրան վերոյիշեալ մեղադրութիւնը, դատարանը հնարաւորութիւն չունենալով գործի մէջ եղած փաստերի վրա հիմնվելով որևէ պատասխան տալու և թոյլատրելի չը համարելով գործի վերջաւորութիւնը յետաձգելու դրամական պահանջների քննութեամբ, որոշեց.

Առաջարկել Սպ. Սպանդարեանին և Դաշնակցութիւն կուսակցութեան՝ այդ հարցը իր ամբողջութեամբ վճռել արբիտրաժի միջոցով՝ յանձին դատարանի նախագահի և կամ նրա անդամներից մէկի, իր ցուցմամբ։

Այս վճիռը կայացրել են միաձայն և ստորագրել երեք դատաւորները։ Դաշնակցութիւն կուսակցութեան և Սպ. Սպանդարեանին տրվում է սրա մի-մի պատճէնը նախագահի և դատաւորների ստորագրութեամբ, որոնք որ այդ րօպէին Պարիզում կը գտնվին։ Դաշնակցութիւն կուսակցութիւնը պարտաւորվում է այս վճիռը ամբողջութեամբ տպելու «Դրօշակի» մերձաւոր №-ում, իսկ Սպ. Սպանդարեանին իրաւունք է տրվում հրատարակելու այս վճիռը ամբողջութեամբ լրագիրներում իր ընտրութեամբ։

Դատարանի այս վճիռը վերջնականապէս կը պարտաւորի և կը յայտարարվի կողմերին ներկայ տարվայ օգոստոս ամսի վերջին։

Նախագահ դատարանի՝ Ա. Ստաալ
Դատարանի անդամ՝ Բ. Իգօրեվ
Պարիզ, 20 յուլիսի 1911 թ.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Սենատոր Տրուսէվիչը պահանջում է դատարանին յանձնել գեներալ Կուրլովին և Վէրիգինին։

◆ Եալտայի քաղաքագլուխ Վիվէնի դէմ յարուցված է մեծ մեղադրանք զեղծումների մէջ։

◆ Վարշավայից «Рѣчь»-ին հաղորդում են. «Երկաթուղիներից պաշտօնանկ եղած լեհերի բողոքագրի վրա Կօկօվցէվը հետևեալն է գրել. «Մի քանի երկաթուղագծերի վրա լեհերը չեն կարող ծառայել ռազմագիտական նկատումներով»։

◆ Մակսիմ Գորկին հերքում է այն տեղեկութիւնը, երբ Շալեապինը ուղերձով խնդրում է ներքին գործերի մինիստր Մակարովին՝ թոյլ տալ իրան վերադառնալ Ռուսաստան։

◆ Նովօչերկասկում հիմնվում է «Խաղաղութիւն» ընկերութեան բաժանմունք։

◆ Պետերբուրգում ոստիկանութիւնը խէցրեց ֆինլանդական նաւագնացութեան ցուցանակները, որոնց վրա ֆինլանդական գերբեր կային։

◆ «Н. Вр.»-ում Տիմիրեազէվը բացատրութիւն է պահանջում կոմս Վիտտէից Դապոնին տրված 30,000 րուբլու մասին։

◆ Իտալական նաւատորմը մօտեցել է Ռօդօսին, Միտիլէնին և Խիօսին։ Վերջինս արդէն նրանց ձեռքումն է։

◆ Տրիպօլիսում արաբները կրակեցին մի խումբ թղթակիցների վրա, որոնց թւում կային նաև ռուսներ։ Իտալական զօրքերը կատարեցին խուզարկութիւններ։ Կրակողները փախան։

◆ Աւստրիայում Իտալիայի դէմ դժգոհութիւնը աճում է։

◆ Թիւրքաց պարլամենտի նախագահը տեղեկացրել է Բրիւսէլի համազգային սօցիալիստական բիւրօյին, թէ Իտալիան աջակցութիւն է ստանում Ֆրանսիայից և Անգլիայից։

◆ «Новое Время»-ն գրում է, որ Աւստրօ-Ունգարիան ձգտում է բարդութիւններ ստեղծել Բալկանում, բայց Ռուսաստանը ամեն միջոցներով պէտք է դիմադրէ այդ մտադրութիւններին։

◆ Լրագիրների ասելով Իտալիան Անգլիային զիջում է Կիրէնաիկի մի մասը։

◆ Պորտուգալական րօյալիստները նորից պատրաստութիւններ են տեսնում Պորտուգալիա ներս խուժել։ Կառավարութիւնը դեռ հանգստութիւն է պահպանում։

◆ Ուրմիայից հաղորդում են, որ սահմանապահ թիւրքաց զօրքերի թիւը ամեն օր աւելանում է։

◆ Չինական կառավարութիւնը հրովարտակ հրատարակեց հիմնադիր ժողով գումարելու մասին։ Յեղափոխականներին յորդորվում է դադարեցնել արիւնհեղութիւնը։

◆ Չինական կառավարական զօրքերը և նաւատորմը ամբողջովին միացան յեղափոխականներին։

◆ Արժանահաւատ աղբիւրներից հաղորդում են, որ Պեկինի կառավարութիւնը դիմել է Միացեալ-Պետութիւններին խնդրելով ազդել մեծ պետութիւնների վրա ներկայ խռովութիւններին վերջ դնելու նպատակով։

◆ Միացեալ-Պետութիւնները Տեանցզին ուղարկեցին 5000 զինուոր։

◆ Մուկդէնում կառավարական զօրքերը ապստամբվեցին և սրի քաշեցին ոստիկանութեան։

◆ Հաստատ տեղեկութիւն կայ, որ չինական բողդիխանը փախչելու է Ռուսաստան։

◆ «Новое Время»-ն հերքում է այն տեղեկութիւնը, երբ Պեկինի ռուսաց դեսպանին հրամայված է վերադառնալ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

3 նոյեմբերի

ՀԷԼՍԻՆԳՖՈՐՍ։ Աբօսի բանտից փախած Զօկկէն բռնվեց ծանր վիրաւորված։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դումայի հարցապնդումների մասնաժողովը մերժեց աջակողմեանների ֆրակցիայի յայտարարութիւնը՝ հարցապնդում ներկայացնել ներքին գործերի և արդարադատութեան մինիստրներին Կիեվում կատարված մանկահասակ Իւշչինսկիի սպանութեան առիթով։

Միեւնոյն մասնաժողովը մերժեց, որպէսզի հարցապնդումներ ուղղվեն հարաւ-արևմտեան երկրում գիւղատնտեսական ծառայողների արհեստակցական միութիւնը փակելու և Կուրլովի այն կարգադրութեան մասին, որի համաձայն Վօլեարլեարսկիների գործի առիթով աքսորված Պեստկէվիչը բռնութեամբ բերվեց գեներալ Կլէյգէլսի մօտ ցուցմունքներ տալու։

Թոյլատրվեց գումարել նոյեմբերին Պետերբուրգում դժբաղդ դէպքերից փոխադարձաբար ապահովագրելու ընկերութիւնների ներկայացուցիչների համագումարը։

Շահագրգռված ֆիրմաները դիմեցին ռուս-անգլիական առևտրական պալատին խնդրելով հաստատել յատուկ արբիտրաժ դատարան։

ԼՎՕՎ։ «Слово Польске»-ն հաղորդում է, որ Սիչինսկին ուրբաթ օրը եկել է Չերնօվիտս աւտոմօբիլով մի ուրիշ անձի հետ և մէկուկէս ժամ մնալուց յետոյ գնաց դէպի ռուսական սահմանը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Высочайше Утвержденное Русское Обществ. Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.
Ձմերային երթևեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից
I Փօստային-մարդատար շոգենաւեր.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով.
Հինգշաբթի » 1 » » »
Շաբաթ » 12 » ուղղակի »
II Մարդատար շոգենաւեր.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » » »
III Մարդատար-ապրանքակիր շոգենաւեր.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » » »
Ժամերը Պետերբուրգի են։
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՕՍՏԱՅԻՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի, Բօլգարիայի, Մակեդօնիայի, Սերբիայի, Անատօլիայի, Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։
ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ Ռիգա, Լիբավա և Րէվել։
Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում Վելիամինօվսկայա փողոց, № 18.
Հեռախօս № 11.
Ընդունվում են եւ ապահովացվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։
Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց
(շ.) 0—23

ԲԺԻՇԿ
Ց. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտօվսկայա, № 66.
(ա.օ.) 1035. 100—9

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1062.
(ա. օ.) 669. 100—62

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ ֆրանսիական ժողովրդական միջոցը տարածելու նպատակով մենք վաճառում ենք փոքրիկ արկղիկներով, իւրաքանչիւրի մէջ
20
դեղահատ

КАСКАРА
МИДИ
L Midy

Գինը
50
կոպէկ
1—2 դեղահատ երեկոյեան՝ ընթրիքից առաջ։ Այդ արկղիկները, նոյնպէս և 50 դեղհատ պարունակողները, կարելի է ձեռք բերել բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։
(5,20) (M. 337683) 962. 18—3

ՆԿԱՐԻՉ
ԱՌԱՔԵԼ ՍԱԳԻՆԵԱՆՑ
(Նախկին ուսուցիչ Գէորգեան ճեմարանի և էջմիածնի նկարիչ)
Ընդունում է զուտ հայկական ճաշակի՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐԻ, ԽԱՉՎԱՌՆԵՐԻ, ԽԱՉԿԱԼՆԵՐԻ, նոյնպէս և ՊՕՐՏՐԷՏՆԵՐԻ ու ԴԷԿՕՐԱՑԻԱՆԵՐԻ պատուէրներ նպաստաւոր պայմաններով։ Հասցէն՝ Тифлисъ. Красильная ул., ограда церкви св. Георгія (на Майданѣ).
(ա. օ.) 1047. 14—3

ՅՈՎՀ. ԱՐԱԲԱՋԵԱՆ
ՈՍԿԻ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

«Ոսկի այբբենարան»
Александрополь.
О. А. Арабаджіанъ

(օ. մ.) 1046. 5—2

---

*) Մեզ խնդրում են արտատպել Սպ. Սպանդարեանի՝ Դաշնակցութեան հետ ունեցած դատի առիթով միջնորդ դատարանի կայացրած այս վճիռը։ Խմբ.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.